

ՏԵՂԵԿԱՏՈՒԻ

DIEGHIEGAIDOU

ديغيجادو

Հրատարակություն Գահիրեի ՀԲԸՄ-ի

نشرة جمعية القاهرة الخيرية الارمنية العامة



ՅՈՅՍՈՎ ԼԻ ՆՈՐ ՏԱՐԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խմբագրական մտորումներ	1
Պարգևատրում գերազանցներուն	2
«Արմատ»ի նոր հանդիպումները.....	3
«Արարատ»ը Գահիրեի մէջ	4
Կադանդի պազար եւ Կադանդ պապա.....	5
Սօսի Ներքերեան-Յակոբեան	
«Ծիածան»ը «Այծեմնիկ»ի մէջ	6
Կադանդը Գահիրեի մէջ	6
Սարուխան 125-ամեակ	7
Սօսի Ներքերեան-Յակոբեան	
Նոր հրատարակութիւն՝	
Պ. Թերզեանի նոր հատորը.....	9
Նաւահանգիստի Տուրք	10
Վերադարձ Դասականին	10
Մեր հանդիպումները՝	
տղթ. Սուրէն Պայրամեանի հետ.....	11
Թէյասեղան դեսպանատան մէջ	15
Սօսի Ներքերեան-Յակոբեան	
Մեր արխիւէն՝	
Փոր Սաիտի քէմփը	17
Թրգ. Անայիս Ճիզմէճեան	
Նորարարութիւն	22
Կարճ լուրեր	23
2023-ի վերջին մրցաշարքը	27
Սօսի Ներքերեան-Յակոբեան	
Ուշադրութիւն	

ԽՄԲԱԳԻՐ
Մարուշ Երամեան

**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԱՏՈՒ**
Սարտիկ Պալեան

**ՍՐԲԱԳՐԻՉ
ՎԵՐՍՏՈՒԳԻՉ**
Անայիս Ճիզմէճեան

**ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ
ՁԵՒԱՌՐՈՒՄ**
Շահէ Լուսարարեան

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Nubar Digital

**Գահիրեի ՀԲԸՄ-ի
լուրերուն հետեւեցէք
www.agbuegypt.com
կայքէջով:**

**Ծանօթացէք «Հայաստան
եւ Հայերը Արաբական Մա-
մուլին մէջ. 1876-1923»
հաւաքածոյի նիւթերուն
www.arminmedia.com
կայքէջով:**

**«Տեղեկատու»ի յօդուածա-
գիրներուն արտայայտած
կարծիքները անպայմանօրէն
չեն ներկայացներ Գահիրեի
ՀԲԸՄի պաշտօնական
տեսակետները:**

**ԹԻՒ 110 ՆՈՐ ՇՐՋԱՆ,
ՅՈՒՆՈՒԱՐ 2024**



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ

Անգամ մը եւս եկաւ 7 Դեկտեմբերը, Հայաստանի երկրաշարժին յիշատակի օրը, եւ անգամ մը եւս, տարուած մեր առօրեական հոգերով, մտահոգութիւններով եւ մանր ուրախութիւններով, մոռցանք անոր յիշատակումը:

Մեզի, հայերուս համար, իւրաքանչիւր տարուան ընթացքին երեք մեծ սգատօներ կան՝ մէկը Վարդանանցն է, որ խորքին մէջ պարտութիւն մըն է, մեզի համար բարոյական յաղթանակի վերածուած, միւսը Ապրիլ 24-ն է, իսկ երրորդը՝ Դեկտեմբեր 7-ը: 365 օրերէն միայն երեք օրեր, յիշատակելու համար ցաւալի դէպքերը մեր հին թէ՛ նոր պատմութեան: Շատ չէ: Հետեւաբար հարց կու տամ՝ իրաւունք ունի՞նք մոռնալու երրորդը՝ Դեկտեմբեր 7-ը, որովհետեւ առաջին երկուքը բնականօրէն կը յիշուին:

Սակայն այնքան ծանր է մեր ներկայի կացութիւնը՝ Արցախի պարպումն ու Սփիւռքի հայահոծ կեդրոններու նօսրացումը, որ նման մոռացում թերեւս կարելի ըլլար ներել, եթէ անոր պատճառը կացութիւնը ամէն գնով փոխելու մեր հաւաքական ճիգը ըլլար:

Տակաւին կայ Պաղեստինի դէմ սանձազերծուած պատերազմը իր մարդկային արհաւիրքով եւ աշխարհի լռութիւնը անոր դէմ: Ճիշդ է որ շատ երկիրներու մէջ Իսրայէլի դէմ հակացոյցեր եղան, ճիշդ է որ Հարաւային Ափրիկէն վերջերս դիմեց Միջազգային Քրէական Դատա-

րանին, Տէն Հաակի մէջ, ամբաստանելով Իսրայէլը իր անմարդկային յարձակումներուն համար, սակայն պաշտօնական կողմերը գրեթէ ոչինչ կ'ընեն դադրեցնելու համար պաղեստինեան աղէտը, հաւանաբար վստահելով մարդկային «մոռացութեան» գործօնին:

Բայց կայ Պաղեստինը իր անհաւասար պատերազմով եւ կայ մարդկային աղէտը, որ մեզի, հայերուս համար խորապէս ցնցող է, որովհետեւ անգամ մը եւս (բիրերորդ անգամ, դժբախտաբար), կը հաստատենք, թէ մարդկային արդարութիւնը բառ ու խօսք է միայն ...

Գաղութը, ինչպէս միշտ, տարուած է իր առօրեայով՝ պասքէթ-պոլի մրցումներէն, տօնական օրերու հաւաքներէն, մինչեւ դպրոցական-համալսարանական քննութիւնները:

Ասիկա որոշ չափով եթէ գոհ կը ձգէ մեզ, միւս կողմէ, կը դիտենք Եգիպտոսի Հայոց Թեմի 2023-ի տարեկան վիճակագրական տուեալները (մկրտութիւն 7, պսակադրութիւն՝ 6, թաղում՝ 25) եւ կը ցաւինք ի տես յստակօրէն խամրող գաղութին: Սակայն, ինչպէս կ'ըսէ թեւաւոր խօսքը՝ յոյսը ամենէն վերջինը կը մահանայ. մենք ալ կը պահենք մեր յոյսը, ի տես հասնող սերունդին, անոր թիւին եւ խանդավառութեան, եւ լաւատեսութեամբ կը դիտենք մեր գաղութին գալիք օրերը:

Բարի, առողջ եւ արդիւնաւետ տարի բոլորին:



ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒՄ ԳԵՐԱԶԱՆՑՆԵՐՈՒՆ



Չորեքշաբթի, 15 Նոյեմբեր 2023-ի երեկոյեան, ՀԲԸՄիութեան Ս. Չազրը Մշակութային Սրահէն ներս տեղի ունեցաւ տարեկան պարգևատրումը Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ գերազանց աշակերտներուն եւ ուսանողներուն:

Ներկայ էին ՀԲԸՄի Գահիրէի Մասնաճիւղի ատենապետ դոկտ. Ճորճ Սիմոնեանն ու անդամները, որոնք վկայագրեր, նուէրներ եւ պարգեւներ յանձնեցին գերազանց աշակերտներուն եւ ուսանողներուն:

Միութեան Գահիրէի Մասնաճիւղի ատենապետ դոկտ. Ճորճ Սիմոնեան իր բացման խօսքին մէջ բարի գալուստ մաղթեց բոլորին, գնահատեց վարչականներն ու մանաւանդ օժանդակ անդամները, որոնք ճիգ չեն խնայեր իրենց աշխատանքին մէջ:

Դոկտ. Սիմոնեան անդրադարձաւ նաեւ պարգևատրուող ուսանողներէն մէկուն՝ Սեւակ Սագայեանին, որ Գահիրէի Էյն Շամս պետական համալսարանէն գերազանց աստիճանաւորումով վկայուել է որպէս բժիշկ:

«Վաղուց է որ պետական համալսարանէն վկայեալներ չէինք ունեցած, եւ այն ալ՝ գերազանց աստիճանաւորումով» ըսաւ յարգելի ատենապետը: Իրապէս ալ թէ՛ Գահիրէի, թէ՛ Աղեքսանդրիոյ ուսանողները օտար համալսարաններ կը յաճախեն ընդհանրապէս:

Այս տարի պարգևատրուեցան վեց աշակերտներ՝ երկուքը պատրաստականէն, իսկ չորսը՝ համալսարանաւարտներ:

Պատրաստական


Էրիքա Կարօ Գումրույեան	(93.30 %)
Ժորժ Լորիս Քէօհնէլեան	(91.43 %)

Համալսարանաւարտ

Լիլիթ Յակոբ Սայեան	Շատ լաւ
Ռիթա Սիմոն Չամքերթէնեան	Գերազանց
Ռուբէն Կարպիս Ժամկոչեան	Գերազանց
Սեւակ Կիրակոս Սագայեան	Գերազանց



«ԱՐՄԱՏ»ի նոր հանդիպումները



Ա. Հանդիպում

Կիրակի, 26 Նոյեմբեր 2023-ին, աշխարհի տարբեր երկիրներէն, ինչպէս Արաբական Միացեալ Էմիրութիւններէն, Մեծն Բրիտանիայէն, Ամերիկայի Միացեալ Նահանգներէն, Հայաստանէն, Գանատայէն, Եգիպտոսէն, Իտալիայէն, Իրանէն, Յորդանանէն, Քուէթէն, Լիբանանէն, Սաուտիայէն, Շուէտէն եւ Թուրքիայէն 45 տղաք եւ աղջիկներ անգամ մը եւս միացան իրենց համակարգիչներու պատուհաններուն միջոցով, Արմատի նոր հանդիպումին ընթացքին, եւ ծանօթացան հայկական նկարչութեան ամենէն մեծ անուններուն, ինչպէս Յովհաննէս Այվազովսկիի, Մարտիրոս Սարեանի, Մինաս Աւետիսեանի, Արշիլ Կորբիի, եւ Մարիամ եւ Երանուհի Ասլամազեաններուն:

Բաւական տեղեկութիւններ ստանալէ ետք, մասնակցող երեխաները, հիրաբար ներկայ գտնուող նկարչուհի Աննա Սողոմոնեանի ուղղութեամբ եւ իրենց երեւակայութիւնը օգտագործելով, կրցան գեղեցիկ նկարներ պատրաստել:

Բ. Հանդիպում

Արմատի երկրորդ հանդիպումը, որ հայկական տօներուն եւ աւանդութիւններուն մասին էր, տեղի ունեցաւ Կիրակի, 17 Դեկտեմբեր 2023-ին:

Այս հանդիպումին ընթացքին նշեցինք հայկական տօներու հարուստ եւ գունագեղ աշխարհը, ինչպէս օրինակ Սուրբ Ծնունդը, Ծաղկազարդը, Սուրբ Սարգիսի տօնը եւ Պայծառակերպութիւնը:

Մասնակիցները ստուգեցին իրենց տեղեկութիւնները հայկական աւանդութիւններուն եւ տօներուն մասին, երկու խումբի բաժնուելով եւ մրցելով Kahoot խաղով:

Հայկական Ծնունդի իւրայատկութենէն մինչեւ Վարդավառի աւանդութիւնը, մասնակից փոքրիկները լսեցին հայկական մշակոյթին եւ ինքնութեան մասին եւ իմացան հայոց ինքնուրոյնութիւնը:



«ԱՐԱՐԱՏ»Ը ԳԱՀԻՐԷԻ ՄԷՋ

Եգիպտական պետության հրաւերով եւ «Աշխարհի Երեխաներու Փառատօն»ի ծրագիրներուն մաս կազմելու համար, Հայաստանէն հիւրաբար քաղաքս կը գտնուէր պատանիներու պարի «Արարատ» խումբը, որուն հիմնադիրն ու ղեկավարն է Ռոպէրթ Մկրտչեան:

Այս խումբը հիմնուած է 2010 թուականին, կը զբաղի գրեթէ միայն հայկական ժողովրդական պարերու դասաւանդութեամբ, եւ բազմաթիւ ելոյթներ ունեցեր է տարբեր երկիրներու տարբեր քաղաքներու մէջ, ինչպէս Վրաստան, Ռուսաստան, Պուլկարիա, Յունաստան, Իտալիա, Սպանիա, Կիպրոս, Մոնթենեկրօ, Տուալայ եւ վերջինը՝ Եգիպտոս:

Այս խումբին մէջ պարած են հարիւրաւոր տղաք ու աղջիկներ, իսկ այսօր անոր մաս կը կազմեն 14-19 տարեկան երեսուն պատանիներ:

Ուրբաթ, 1 Դեկտեմբեր 2023-ի երեկոյեան ժամը 7-ին, Հելիոպոլսոյ Պըլըքտանեան սրահէն ներս ելոյթ ունեցաւ «Արարատ» խումբը իր 13 պարողներով (5 աղջիկ եւ 8 տղայ), որոնք ներկայացան ոչ միայն պարերով, այլ նաեւ նուագով՝ դաշնամուրի եւ թմբուկի վրայ, եւ ասմունքով, մեծ խանդավառութիւն ստեղծելով ներկաներուն մէջ, որոնք խումբներամ կերպով լեցուցեր էին սրահը:

Երեկոն նախաձեռնութիւնն էր Գահիրէի մէջ Հայաստանի Հանրապետութեան դեսպանութեան եւ Գահիրէի Ազգային

Առաջնորդարանին, իսկ կազմակերպումը վստահուած էր «Յուսաբեր» Մշակութային Ընկերակցութեան եւ Կոկանեան Սրահին: Ներկայ էին գաղութիս բարեջան առաջնորդ Տ. Աշոտ Եպս. Մնացականեանն ու Եգիպտոսի ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպան՝ տիար Հր. Փոլատեանը:

«Հայրենիքի, Սփիւռքի եւ Արցախի դիմագրաւած ծանր փորձութիւններով հանդերձ, հայրենիքի եւ Սփիւռքի մէջ ստեղծագործական ճանապարհը կը շարունակուի, սրտերը կը բաբախեն, սրահները



կը լեցուին, վարագոյրները կը բացուին եւ ծափողջիւնները կը զրնգան: Միշտ այսպէս եղած է՝ հայը շարունակած է եւ կը շարունակէ ստեղծագործել» իրաւամբ ըսաւ Լորիկ Տրդատեան, իր բացման խօսքին մէջ:

Ներկայացուեցան բազմաթիւ պարեր՝

շար. էջ 8 ➔



ԿԱՂԱՆԴԻ ՊԱԶԱՐ ԵՒ ԿԱՂԱՆԴ-ՊԱՊԱ ԳԱՀԻՐԷԻ Հ.Մ.Ը.Մ. ՆՈՒՊԱՐԻ ՄԷՋ

Որբաթ, 22 Դեկտեմբեր 2023-ին Գահիրէի Հ.Մ.Ը.Մ. ՆՈՒՊԱՐԻ Տիկնանց Յանձնախումբը կազմակերպած էր ամանդութիւն դարձած «Կաղանդի Պազար»ը: Մարգագետնին վրայ ճերմակ ծածկոցներով եւ կաղանդի զարդարանքներով սեղանները շուտով լեցուեցան ակումբին անդամներով ու համակիրներով, որոնք անհամբեր կը սպասէին Պազարին բացման:

Օրուան նախագահուիին՝ տիկին Սեդա Թէրզեան, կտրելով կարմիր ժապաւէնը, պազարը բացուած յայտարարեց ու ներկաները փութացին գնելու ցուցադրուած ճոխ ուտեստեղէնները: Հոն էին չէօրէկն ու թոփիկը, անուշապուրն ու ակումբին տիկիներուն կողմէ պատրաստուած մանթըն, քուպէպան, պահքի լահմաճունն ու զաադարով մանափշը: Այս բոլորին կողքին տեղ գրաւած էին հայկական ապուխտը, սու պէօրէկը, կաղամբի խճողակը, թահինով հացը, մահլէպով պիսքուին, պանիրով պէօրէկը, արմաւի եւ կեռասի անուշները, բալի (ֆիշնէ) լիքէօրն ու տեսակ-տեսակ խմորեղէններն ու անուշեղէնները:

Կէսօրուան ճաշի սպասարկութիւնը կատարուեցաւ կանոնաւոր կերպով ու արագ: Թէպէտ օդը արեւոտ էր, սակայն անախորժ, փոշոտ քամի մը մերթ ընդմերթ կը փչէր, ստիպելով ներկաներէն ոմանց գոց սրահ տեղափոխուիլ:

Որբաթ, 29 Դեկտեմբեր 2023-ին Կաղանդ պապան այցելեց ակումբ: Կէսօրէ ետք ժամը 1:30-էն սկսեալ ծնողներ, փոքրիկներ ու պարման-պարմանուիներ եկած էին Հ.Մ.Ը.Մ. ՆՈՒՊԱՐ, ուր տիկին Նայիրի Սիմոնեան անոնց համար պատրաստած էր խաղեր ու մրցումներ: «Ծիածան» մանկապատանեկան երգչախումբը, ղեկավարութեամբ տիկին Գոհար Ղազէլեանի, որ ելոյթ ունեցաւ կաղանդի երգերով, մեծապէս գնահատուեցաւ ներկաներուն կողմէ: Վարձքը կատար տիկին Ղազէլեանին, որ տարիներ շարունակ իրերայաջորդ սերունդներով կանգուն կը պահէ այս իւրայատուկ երգչախումբը:

Մեծէն պզտիկ անհամբեր Կաղանդ պապային կը սպասէին, որ դանդաղ քայլերով մուտք գործեց ու բազմեցաւ իրեն համար մասնաւոր պատրաստուած բազկաթոռին վրայ: Փոքրիկներէն ոմանք երգով կամ արտասանութեամբ ելոյթ ունեցան, նախքան իրենց նուէրները ստանալը: Տիկին Նայիրի Սիմոնեան տարիքի համեմատ խումբերու բաժնեց փոքրիկները: Աւելի քան 80 մանուկներ ու պարման-պարմանուիներ կանոնաւոր կերպով նուէրներ ստացան:

2023 տարուան ձեռնարկները հասան իրենց աւարտին: Շնորհաւոր Նոր Տարի բոլորին:

*Սօսի Ներսիսեան-Յակոբեան
Յունուար 2024*





«ԾԻԱԾԱՆ»Ը «ԱՅԾԵՄՆԻԿ»Ի ՄԷՋ

ՀԲԸՄԻ Գահիրէի մասնաճիւղի «Ծիածան» մանկապատանեկան երգչախումբը Հինգշաբթի, 28 Դեկտեմբեր 2023-ին այցելեց «Այծեմնիկ» ծերանոց: Երգչախումբը՝ մատուցելով Միհրանի եւ տիկին Գոհար Ղազէլեանի գլխավորութեամբ, տօնական մթնոլորտ ստեղծեց ծերանոցին մէջ՝

երգելով տասնեակէ աւելի երգեր:

Ելոյթի աւարտին Կաղանդ պապան կատարեց իր երկար սպասուած այցելութիւնը, նուէրներ բերելով երգչախումբի փոքրիկ անդամներուն եւ Այծեմնիկի պատասպարեալներուն, ուրախացնելով բոլոր ներկաները:



ԿԱՂԱՆԴԸ ԳԱՀԻՐԷԻ ՄԷՋ

Հակառակ անցնող քանի մը տարիներուն, երբ ամբողջ գաղութը միասնաբար կը տօնէր կաղանդը եւ կը դիմաւորէր նոր տարին, որոշուած սրահի մը մէջ, այս տարի եգիպտահայութիւնը Գահիրէի մէջ նոր տարին դիմաւորեց ըստ իր ակումբին կազմակերպած երեկոյթին:

Կոկանեան Սրահի համակիրները, բարեկամներն ու հիւրերը Կաղանդը դիմաւորեցին Նովոթէլ պանդոկի շքեղ սրահներուն մէջ, մինչ Յուսաբեր ակումբի շրջանակը, իր հիւրերով միասին Կաղանդը տօնեց եւ նոր տարին դիմաւորեց ակումբին Գարագաշեան սրահէն ներս:

ԱԼ. ՍԱՐՈՒԽԱՆԻ ԾՆՆԴԵԱՆ 125-ԱՄԵԱԿԸ

Կիրակի, 28 Յունուար 2024-ին Գահիրեի օփերային փոքր սրահին մեջ տեղի ունեցավ եգիպտահայ հանրաժանօթ երգիծանկարիչ Ալեքսանտր Սարուխանի ծննդեան 125-ամեակի ոգեկոչումը, կազմակերպութեամբ օփերայի Մշակութային Ձեռնարկներու բաժնին, գլխավորութեամբ Դոկտ. Խալէտ Տաղէրի, համագործակցութեամբ անդուլ պրպտող արուեստասէր Ապտալլա Էլ Սաուիի, հիմնադիրը «Եգիպտական Երգիծանկարչութեան Պահպանում» հաստատութեան, մասնակցութեամբ Գահիրեի ՀԲԸՄի Տեղական Յանձնաժողովին եւ աջակցութեամբ Սարուխանի ընտանիքին:

Ապտալլա Էլ Սաուի, որ իր ժամանակն ու կորովը անխոնջօրէն տրամադրած է Սարուխանի հանճարը, արտակարգ տաղանդն ու ունեցած դերը եգիպտական երգիծանկարչութեան մէջ դիւրամատչելի կերպով ներկայացնելու եգիպտացի-



ելոյթ ունեցաւ մի քանի երգերով, իսկ Կոկանեան Սրահի Զանգեզուր պարախումբին փոքրիկները, ղեկավարութեամբ պարուսոյց Էլէն Մարտիրոսեանի, ներկայացուց պար մը: Փոքրերուն ելոյթները գնահատուեցան ներկաներուն կողմէ:

Յուցադրուեցաւ «Սարուխանի Կենսագրութիւնն ու Կեանքի Ուղին, Ծնունդէն Մինչեւ Մահ» կէս ժամնոց վաւերագրական տեսերիզը, որ պատրաստուած էր բեմադրիչ Մօդազ Բաղէպի կողմէ, շատ հետաքրքրական եւ համապարփակ աշխատանք մը, որ ցայժմ միակն է Սարուխանի մասին:

«Օփերայի Մշակութային Սալօն» խորագրին տակ, երեք բազկաթոռներ շարուեցան բեմին վրայ, ուր նստան օրուան խօսք առնողները՝ Սարուխանի թոռնուհին՝ տիկին Սիլվա Ներեսեան-Բլատեան, ՀԲԸՄի Գահիրեի Մասնաճիւղի ատենապետ Դոկտ. Ճորճ Սիմոնեան



ներուն ու հայերուն, առիթը չի փախցնէր Սարուխանի ամեակները, ըլլան անոնք ծննդեան կամ մահուան, շքեղօրէն նշելու:

Այս անգամ, ի տարբերութիւն ուրիշ տօնակատարութիւններու, հայկական մշակութային նմոյշներով ճոխացուցած էր յայտագիրը: Գահիրեի ՀԲԸՄի Ծիածան մանկապատանեկան երգչախումբը, ղեկավարութեամբ Տիկին Գոհար Ղազէլեանի



եւ Ապտալլա Էլ Սաուի:

Էլ Սաուի մեծ պաստառի վրայ ցուցադրելով, Սարուխանի աշխատանքներէն նմոյշներ ներկայացուց անոր սկզբնական գործերէն, իր իսկ յայտնաբերած աշխատանքները, որոնք «Տար Էլ Քոթոպ»ի (Եգիպտոսի Ազգային Գրադարան) մէջ իր տարած երկարատեւ պրպտումներուն արդիւնքն են: Նաեւ ցոյց տուաւ այն պաշ-



տօնական փաստաթուղթը, որ 1955-ին նախագահ Կամալ Ապտէլ Նասեր եգիպտական քաղաքացիութիւն շնորհած էր Սարուխանի:

Ապա խօսք առաւ տիկին Սիլվա Ներետեան-Բլատեանը, որ շնորհակալութիւն յայտնեց էլ Սաուդին իր տարած աշխատանքին համար, նաեւ Գահիրէի ՀԲԸՄին, որ միշտ իր նիւթական ու բարոյական աջակցութեամբ նեցուկ կանգնած է Սարուխանի մասին ձեռնարկներ կամ գիրքեր լոյս տեսնելու աշխատանքներուն: Ան աւելցուց որ վերջերս Վիեննա գտնուած ժամանակ այցելած է Միխայիլ Միաքանութեան կեդրոնը, ուր իրեն ցոյց տուած են Սարուխանի գործերէն մեծ հաւաքածոյ մը:



Ապա Դոկտ. Ճորճ Սիմոնեան, յանուն Գահիրէի ՀԲԸՄին, փակումը կատարեց այս շատ յաջող ձեռնարկին:

*Սօսի Ներքերեան-Յակոբեան
Յունուար 2024*



շաբ. էջ 4-էն

«ԱՐԱՐԱՏ»Ը ԳԱՀԻՐԷԻ ՄԷՋ

Շալախօ, Կինտօներու պար, եւ այլն, իսկ ելոյթը վերջ գտաւ Արցախ պարով:

Իր փակման խօսքին մէջ գաղութիս բարեջան առաջնորդ Տ. Աշոտ Եպս. Մնացականեան բարձր գնահատեց խումբին ջանքերը, աշխարհին ներկայացնելու հայկական պարերն ու անոնց միջոցով՝ հայ մշակոյթը: Ապա յուշանուէրով մը պատուեց խումբին ղեկավարը՝ Ռոպէրթ

Մկրտչեանը:

Եգիպտոսի ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպան՝ տիար Հր. Փոլատեան 13 պարողներէն իւրաքանչիւրին նուիրեց եգիպտական յուշանուէր մը:

Երեկոն վերջ գտաւ ջերմ եւ խանդավառ ծափահարութիւններու մէջ:





ՊԵՐՃ ԹԵՐԶԵԱՆԻ ՆՈՐ ՀԱՏՈՐԸ

Գահիրեի մեջ 2024-ի առաջին ամիսը լոյս տեսած է եգիպտահայ մտաւորական Պերճ Թերզեանի նորագոյն հատորը, որ կը կրէ «Գրախօսականներ եւ Անդրադարձներ Պերճ Թերզեանի Գիրքերուն Մասին եւ Իր Հետ Եղած Հարցազրոյցներ» խորագիրը:

Հատորը ձօնուած է «կեանքիս լծակից տիկնոջս Սեդա Սամուէլեան-Թերզեանի, առանց որուն աջակցութեան ներկայ աշխատանքը լոյս չէր տեսներ»:

Հեղինակը շնորհակալութիւն կը յայտնէ դոկտ. Վաչէ Ղազարեանին (ԱՄՆ), «Իր վարած «Մայրենի Հրատարակչական»ի միջոցով ներկայ հրատարակութեան նախատպագրական գործերը աւանդական բժախնդրութեամբ իրագործելուն եւ իր տուած թանկագին խորհուրդներուն համար»:

Հատորը, իր խորագրին համեմատ երկու գլխաւոր բաժիններ ունի՝ ա. գրախօսականներ եւ անդրադարձներ, եւ բ. հարցազրոյցներ:

Գրախօսականները հեղինակին 15 գիրքերէն 11-ին մասին են, իւրաքանչիւր հատորի եղած անդրադարձները առանձին խմբուած:

Իսկ հարցազրոյցները թիւով եօթն են, կատարուած հայրենի թէ սփիւռքահայ գրագէտներու եւ թղթակիցներու կողմէ:

Խօսելով վերջին այս հատորին մասին հեղինակը յառաջաբանի փոխարէն կը ներկայացնէ «Այս Ժողովածուն», ուր կ'ըսէ.

«Ներկայ հատորը հեղինակին երկրորդ փորձն է, իր հրատարակութիւններուն վերաբերեալ գրախօսականները համահաւաք, մէկ կողքի տակ ներկայացնելու:

ԳՐԱԽՕՍԱԿԱՆՆԵՐ ԵՒ ԱՆԴՐԱԴԱՐԶՆԵՐ
ՊԵՐՃ ԹԵՐԶԵԱՆԻ
ԳԻՐՔԵՐՈՒՆ ԽԱՍԻՆ ԵՒ ԻՐ ՀԵՏ ԵՂԱԾ
ՀԱՐՑԱԶՐՈՅՑՆԵՐ

Գահիրէ, 2024

Նման փորձ մը կատարուած է 2011-ին, երբ հեղինակը 2010-ին հրատարակած է իր «Յետադարձ Անդրադարձ» հայերէն անդրանիկ հատորը, որուն լոյս ընծայումին առիթով զանազան անձերու կողմէ, տարբեր պարբերականներու մէջ եօթը գրախօսականներ գրուած են, որոնք յետագային մէկ կողքի տակ միատեղ տպուած են:

Վերադառնալով ներկայ հատորին, հարկ է նշել թէ, մինչ գրախօսականներու նախորդ գրքոյկը կը վերաբերէր միայն մէկ հատորի, ներկայ հատորը աւելի

ընդգրկուն է:

Հեղինակին առաջին գիրքին հրատարակութեան թուականէն (2008), մինչեւ օրս լոյս տեսած են 15 գիրքեր եւ գրքոյկներ: Այս հատորը 16րդն է:

Հատորը կ'ընդգրկէ 22 գրախօսողներու յօդուածներ, որոնցմէ ոմանք ներկայ հատորին մէջ յիշուող մէկէ աւելի գիրքեր գրախօսած են:

Այս գրախօսականներուն կողքին ԱՆԴՐԱԴԱՐԶ անունին տակ տեղադրուած են գրախօսականի բնոյթ ունեցող գրութիւններ, ինչպէս նաեւ կարգ մը գիրքերու յառաջաբաններ, որոնք դարձեալ կրնան գրախօսականներ համարուիլ:

Ասոնց կողքին ներկայացուած են հեղինակին հետ տարբեր առիթներով եղած 7 հարցազրոյցներ:

Նիւթերու այս դասաւորումը կատարուած է ամբողջական եւ համապարփակ պատկեր մը տալու հատորին մէջ, գրախօսողներուն արծարծած հարցերուն մասին:

Տարիներու ընթացքին Թերզեանի լոյս ընծայած գիրքերը գրախօսած են հայրենի թէ սփիւռքահայ մտաւորականներ,



ինչպես Աշոտ Մելքոնեան, Սուրեն Դանիելեան, Արմեն Մելքոնեան, Յակոբ Ծուլիկեան, Ալբերտ Խառատեան, Սուրեն Սարգիսեան, Մելանիա Բադալեան, Գէորգ Եազըճեան, Պարոյր Աղապաշեան, Թորոս Թորանեան, Գէորգ Պարտաքճեան, Անդրանիկ Տագէսեան, Երուանդ Ազատեան, Երան Գույումճեան, Պէպօ Սիմոնեան, Վարդի Քէշիշեան եւ այլք:

Իւրաքանչիւր գիրքի գրախօսականները սկսելէ առաջ, էջ մը տրամադրուած է ներկայացնելու համար գիրքին հրատարակութեան թուականը, էջերուն թիւը, յառաջաբանին հեղինակը, եւ գրախօսողներուն անուանացանկը:

Հատորին վերջաւորութեան ներկա-

յացուած են հեղինակին գիրքերը եւ գրքոյկները, ինչպէս նաեւ ստացած գնահատանքի գիրքերը եւ մետալները:

Հատորը կը հաշուէ մեծ չափի 278 էջ:

Այս հատորին ուշադիր ընթերցողը պիտի նկատէ, թէ ներկայացուած կամ գրախօսուած հատորներուն ընդմէջէն կ'ուրուագծուի հեղինակին կեանքը, որ իր կանուխ երիտասարդութենէն իսկ համակ նուիրում եղած է ազգին, աւելի քան 60 տարի եգիպտահայ գաղութին իր ծառայութեան ընդմէջէն:

«Տեղեկատու»-ն կը շնորհաւորէ հեղինակը, իր 16րդ հատորին լոյս ընծայման առիթով եւ քաջառողջութիւն կը մաղթ իրեն:

ՆԱԽԱՀԱՆԳԻՍՏԻ ՏՈՒՐՔ

Անուղղակի տուրքերէն ամենէն ծանրը նաւահանգիստի տուրքն էր Կիլիկիոյ մէջ: Ամէն առետրական նաւ, որ գետաբերաններուն եւ նաւահանգիստին մէջ խարիսխ կը ձգէր, հարկ էր որ տուրք վճարէր, ինչպէս նաեւ այն ապրանքներուն համար, որ օտարները կիրճերու մէջէն եւ գետերու վրայէն իրենց երկիրը կը փոխադրէին: Ասոնցմէ զատ մասնաւոր տուրք մը կը վճարէին գողցուած իրեղէններու համար, որոնց արժէքին մէկ երրորդը արքունի գանձարանը կը մտնէր:

Թէպէտ այս անուղղակի տուրքերը անտանելի էին, բայց անոնք կը հարուածէին միայն օտարահպատակները. այսպիսով հայ գիւղացին,



հայ գործաւորն ու հայ քաղաքացին նուազագոյն տուրքերու ենթարկուած կ'ըլլային, հետեւաբար աւելի բարեկեցիկ կեանք մը ունէին, քան միջին դարու եւրոպացի գիւղացիները, որոնք ծայր աստիճան չքաւորութեան մէջ կ'ապրէին:

ՎԵՐԱԴԱՐՁ ԴԱՍԱԿԱՆԻՆ

Աւելի քան 10 տարի ետք Շուէտ, որ դպրոցներու մէջ թուայնացման առաջամարտիկներէն մէկն էր, կը վերադառնայ դասաւանդումի աւանդական ոճին եւ դասագիրքերու օգտագործման: Ուսումնասիրութիւնները հաստատուել են, որ թղթային դասագիրքով սորվիլը շատ

աւելի լաւ է կեդրոնականալու եւ սորվածը միտքը պահելու համար: Ըստ շուէտներուն՝ թուայնացումը, այլ վատ արդիւնքներու կողքին, դպրոցական աշխատանքի տկարացման, կեդրոնացումի հարցերու եւ ֆիզիքական տկարացումի կը յանգեցնէ:

Տոբթոր ՍՈՒՐԷՆ ՊԱՅՐԱՄԵԱՆԻ հետ



Ալեկի քան յիսուն երկար տարիներ հասարակական գործունեութեամբ եգիպտահայ գաղութին ծառայած արամնաբոյժ փոքր. Սուրեն Պայրամեան քաջածանօթ անուն է ոչ միայն եգիպտոսի, այլ Հայաստանի եւ Սփիւռքի տարբեր գաղութներուն մէջ: Հեղինակ է վեց մեծ հատորներու (մէկը անգլերէն, մէկը արաբերէն) եւ երկու գրքոյկներու, որոնք բոլորն ալ կը բեւեռուին եգիպտահայ գաղութին պատմութեան շուրջ, հաստատագրելով այդ հին եւ հարուստ գաղութին ժամանակակից պատմութիւնը, արձանագրելով անոր մշակութային եւ կառուցուածքային արժէքները, եւ մեծ չափով ստարելով ժամանակակից Սփիւռքահայ պատմութեան:

Եղած է Գահիրէի Ազգային Իշխանութեան Պատկառելի Թեմական Ժողովի անդամ, ապա արենադպիր՝ 1975-2023 Նոյեմբեր, Եղիայեան Կրթական Հիմնադրամի Յանձնախումբի անդամ՝ 1972-1984, Ուսումնական Խորհուրդի անդամ՝ 1979-1985, Հայերէն լեզուի բարելաւումի ծրագրի պատրաստութեան եւ ուսումնական մակարդակի բարձրացման յանձնախումբի անդամ՝ 1981-1987, Կրթական հարցերու յարուկ յանձնախումբի անդամ՝ 1984-1986, Փօլ Քիլիպրճեան Հրատարակչական Հիմնադրամի յանձնախումբի անդամ՝ 1984-1985: Ինչպէս նաեւ Յուսաբեր Մշակութային Ընկերակցութեան եւ Յուսաբեր ակումբին վարչական անդամ, ապա արենադպիր եւ արենապետ, Հ.Մ.Ը.Մ. Արարապ մարզական ակումբին (Գահիրէ եւ Հելիոպոլիս) վարչական անդամ եւ արենադպիր:

1982-1987 թուականներուն եղած է եգիպտահայ «Յուսաբեր» օրաթերթի խմբագիր:

Եգիպտոսէն դուրս եւս ունեցած է շինիչ օժանդակութիւն.

Եղած է խմբագրական խորհուրդի անդամ «Բանբեր Հայաստանի Գրադարաններու» կիսամեային 2015-էն:

Ցեղասպանութեան թանգարան-ինստիտուտին մէջ ունի յարուկ բաժին իր անունով՝ «Ս. Պայրամեան Հաւաքածոյ»:

Բազմաթիւ արխիւային նիւթեր, ձեռագրեր եւ լուսանկարներ նուիրած է Հայաստանի Ազգային Արխիւներուն, Ե. Չարենցի Անուան Գրականութեան եւ Արուեստի թանգարանին, որոնց համար շնորհակալագրեր ստացեր է:

Հրաւիրուած է ազգային եւ միութենական ձեռնարկներու իբրեւ բանախօս եւ դասախօս, ինչպէս նաեւ կազմակերպիչ՝ լսարանային հաւաքոյթներու: Իր աշխատանքը գնա-



հայրուած է Հայաստանի եւ այլ գաղութներու մէջ մեքալներով, գնահատանքի եւ շնորհակալութեան գիրերով:

Արժանացած է Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան, Ս. Էջմիածին, Հայաստան, «Սահակ-Մեսրոպ» շքանշանին 1999.

Հ.Մ.Ը.Մ.ի «Արտակարգ Շքանշան»ին, Պէյրութ-Լիբանան 1999.

Մեսրոպ Մաշտոցի անուան Մարենադարանին, Հայաստան, «Մեսրոպ Մաշտոց» յուշամեքալին 2010.

Հայաստանի Ազգային Գրադարանի «Յակոբ Մեղապարտ» յուշամեքալին 2010.

Մեծի Տանն Կաթողիկոսութեան, Անթիլիաս-Լիբանան «Մեսրոպ Մաշտոց» շքանշանին 2012.

Ցեղասպանութեան Թանգարան-ինստիտուտի, Հայաստան, «Ֆրանց Վերֆէլ» յուշամեքալին 2013.

ՀՀ Սփիւռքի Նախարարութեան «Մայրենիի Պաշտպան» տիպլոմին, Հայաստան, 2017:

Կը հանդիպինք յարգարժան բժիշկին եւ հաճելի գրոյց մը կ'ունենանք իր հեք:

Տեղեկատու - Գիտենք որ երկար տարիներ պատասխանատու պաշտօններ վարած էք կուսակցութեան մէջ, ձեր ատամնաբուժական աշխատանքին առընթեր: Գիտենք նաեւ որ ադքան զբաղուածութեան մէջ կրցած էք ժամանակ գտնել եգիպտահայոց պատմութեան կարեւոր երեսակները ներկայացնող գիրքեր գրելու եւ այս հարուստ գաղութին նոր պատմութիւնը պահ տալու համար: Երբ սկսած էք այս աշխատանքին եւ ինչ պայմաններու տակ:

Տոքթ. Սուրէն Պայրամեան - 1965-ին, համալսարանական ուսումնառութեանս աւարտին՝ ասպարէզիս ինքնակազմութեան կողքին, սկսայ միութենական եւ հասարակական կեանքի ինքնակամ տրամադրութիւններովս զբաղուիլ:

Կատարածս պաշտօններ չէին, այլեւ յանձնառու եւ պատասխանատու հանգամանքներով, անխախտ սկզբունքով՝ հայ ժողովուրդի ճակատագրով քալած ծնողացս շունչով, եւ յատկապէս՝ հայրենիքիս հանդէպ պաշտամունքի ոգին ուղեցոյց ունենալով, նուիրաբերելու եռանդս սպաս դրի եգիպտահայ գաղութի բոլոր կառոյցներուն, կարելիութեանս սահմաններով եւ առանց որեւէ վերապահութեան:

Կրնայ ըլլալ, որ վրիպումներ ունեցայ, կամ չհասկցուելով սրտնեղութիւն պատճառեցի: Դժբախտաբար, իմ հասցէիս ունեցայ նաեւ վիրաւորական վերաբերմունք, խօսք եւ գրութիւն:

Ինքնաշխատութիւնը եղաւ իմ լաւագոյն դպրոցս: Հայրենիքի հանդէպ սերն

ու ակնածանքը ունեցայ կատարած աշխատանքիս եւ գործելակերպիս ներշնչումի աղբիւրը:

Վաղ երիտասարդութեանս ապրած միջավայրիս մէջ էր, որ հաւաքներու եւ հանդիսութիւններու ընթացքին տեսայ եւ վարակուեցայ հայ մշակոյթին անձնուրաց նուիրուածներու հանդէպ յարգանքի մթնոլորտով: Կ'ապրիմ այն յոյսով, թէ ինչքանով կարողացայ իրականացնել երազներս եւ յատկապէս ապրած շրջապատիս ակնկալած պահանջները, եւ այս, անսասան հաւատքս միշտ ուղղութիւն ունենալով: Ընկերական կեանքի շրջապատիս մէջ ունեցայ տիպար գաղափարակիցներ եւ բարեկամներ, վայելելով վաստակաւոր երէցներու քաջալերանքն ու խորհուրդները, յատկապէս՝ «Յուսաբեր»ի երիտասարդականի էջերով աշխատակցութեանս գրիչս կոփելով:

Տ. Ինչ է թիւր ձեր հրատարակած գիրքերուն:

Ս. Պ. Ժամանակի ընթացքին, մամուլի նմոյշներու հաւաքածոյիս ստուարացումին ընդառաջ, նախաձեռնեցի եւ լծուեցայ եգիպտահայ մամուլի մասին համապարփակ տուեալներու միատեղումի աշխատանքին, քաջալերանքին արժանանալով գրասէր բարեկամներու եւ հայրենիքի մէջ գրադանավար պատասխանատուներու: Այսպէս, պատրաստած գիրքերէս առաջնեկը «Հայ Մամուլը եգիպտոսի Մէջ» հատորս է, որ լոյս տեսաւ 2005-ին: Երկրորդ հատորս եղաւ «Հայ Գիրքը եգիպտոսի Մէջ» աշխատասիրութիւնս 2012-ին, որուն յաջորդեց եգիպտահայ մամուլին ան-

գլերէն եւ արաբերէն թարգմանութեամբ պատրաստած հատորներ, 2013-ին:

Իսկ, 2017-ին լոյս տեսաւ «Հայկական Համայնքային Կառոյցները Եգիպտոսի Մէջ» գիրքս, արդիւնք՝ ծաւալուն եւ տքնաջան պրպտումներու, հայրենիքի եւ սփիւռքահայ օճախներու բազմատասնեակ գրապահոցներու պատասխանատուներուն սիրայօժար գործակցութեամբ:

Պատրաստեցի նաեւ երկու գրքոյկներ, առաջինը՝ 2012-ին, Հայ Գրատպութեան 500-ամեակին նուիրուած «Յուսաբեր» Մշակութային Ընկերակցութեան կազմակերպած եգիպտահայ գիրքի ցուցահանդէսին առթիւ, իսկ երկրորդը՝ 2013-ին, «Յուսաբեր» օրաթերթի 100-ամեակին առիթով, եգիպտահայ մամուլի հաւաքածոյիս նուիրուած ցուցահանդէսին առթիւ, թերթին պատմականով, խմբագիրներուն եւ այլ յարակից նիւթերու մասին հակիրճ ծանօթացումներով:

Տ. Նոր հեղինակութիւն մը ունի՞ք, որ տակաւին լոյս չէ տեսած: Կրնա՞ք մանրամասնօրէն խօսիլ անոր մասին:

Ս. Պ. Քանի մը նոր ծրագիրներ ունիմ, որոնք կրնան հատորի վերածուիլ, ինչպէս օրինակ եգիպտահայ միութիւններու եւ կազմակերպութիւններու ծրագիրներուն եւ կանոնագրերուն հաւաքածոյ-ներկայացում, եգիպտահայ վաստակաւոր անուններու ներկայացում, նաեւ անոնք, որոնք թէեւ եգիպտոս ծնած չեն, բայց հոս ապրած եւ հոս մահացած-թաղուած են:

Այս երկուքէն անկախ միշտ միտքիս մէջ է յուշերուս արձանագրութիւնը, անձնական կեանքիս եւ հասարակական աշխատանքիս վերաբերեալ, մանաւանդ որ 50 տարի թեմական ծառայութիւն ունեցած եմ եւ 48 տարի եղած եմ ատենադպիրը Գահիրէի Ազգային Իշխանութեան Պատկառելի Թեմական Ժողովին:

Բարեբախտաբար աշխատանքս շատ յաճախ գնահատուած է հայրենիքի թէ Սփիւռքի մէջ, տարբեր հաստատութիւններէ, միութիւններէ եւ հիմնարկութիւններէ:

Տ. Օգնական ունի՞ք պրպտումի ձեր աշխատանքին մէջ, թէ՛ ամէն բան դուր կ'ընէք անձնապէս:

Ս. Պ. Սփիւռքը արեւմտեան աշխարհին



պէս չէ, ուր հեղինակներ իրենց կողքին ամբողջ խումբ մը կ'ունենան պրպտումներ ընելու համար: Սփիւռքի մէջ մտաւորականը ինք պէտք է ընէ ամբողջ աշխատանքը՝ աղբիւրներ գտնելէն մինչեւ կարելոր պրպտումներ ընելը, ուսումնասիրութիւնը, գիրքը գրելուն առընթեր:

Բարեբախտաբար ունեցած եմ եգիպտոսէն դուրս ապրող բարեկամներ, որոնք սիրով ընդառաջած են խնդրանքներու եւ յաճախ, իրենց յոգնութեան իսկ գնով, աղբիւրներէ պատճենահանելով ղրկած են ինծի պէտք եղածը:

Տ. Ինչ աղբիւրներ օգտագործած էք այս գիրքերուն կազմութեան համար: Կրնա՞ք մանրամասնել:

Ս. Պ. Որպէս աղբիւր ունեցած եմ Գահիրէի գրադարանները, ինչպէս Թորգոմեան մատենադարան (Գահիրէ, Ազգային Առաջնորդարան), Փալանճեան մատենադարան (Գահիրէ, Յուսաբեր շէնք, այժմ լքուած), ՀԲԸՄի վերակազմեալ Աղաթօն գրադարանը (Գահիրէ), Ֆրանսիսքէն Հայրերու մատենադարանը (Գահիրէ), Երեւանի կարգ մը մատենադարան-գրադարանները, ինչպէս Մաշտոցի մատենադարանը, Ազգային Գրադարանը, Հայկական Հանրագիտարանի գրադարանը, Գիտութիւններու Ակադեմիայի գրադարանը, Գրականութեան եւ Արուեստի թանգարանի գրադարանը, Մեծն Տանն Կիլիկիոյ մատենադարանը (Անթիլիաս), Հայկազեան համալսարանի գրադարանը (Պէյրութ), Փարիզի Նուպարեան գրադարանը, Վիեննայի Մխիթարեան Միաբանութեան մատենադարանը, Կոստանդնուպոլսոյ Հայոց Պատրիարքարանի մատենադարանը:

Ունեցած եմ նաեւ բարեկամներ, որոնք փութացած են օգնել աշխատանքիս եւ պրպտումներուս, գտնելով, պատճենա-



հանելով եւ ինծի ղրկելով խնդրածներս:

Այս բոլորին կողքին եւ անշուշտ առաջին հերթին պրպտեր եմ եգիպտահայ մամուլի եւ եգիպտահայ տարեգիրքերու էջերը:

Մասնագիտական ուսումնաւարտելէ ետք, երբ պարտադիր երկու տարուան աշխատանքի կ'երթայի ընդհանրական դարմանատան մը մէջ, ճամբուս վրան էր նշանաւոր էզպէքիէն իր նոյնքան նշանաւոր ցած պատով, որ հին գիրքերու շատ ճոխ շուկայ մըն է մինչեւ օրս: Աշխատանքէն ետք յաճախ կը յամենայի այդ գիրքերը դիտելու: Երբ վաճառողները հասկցան որ հայերէն գիրքերն են հետաքրքրութեանս կիզակետը, սկսան իրենք կանչել զիս ամէն անգամ, որ նոր գիրքերու սնտուկներ կու գային հանգրուանել իրենց քով, որովհետեւ այդ օրերուն – 60-ականներն էին – եգիպտոսէն հայերու արտագաղթը մեծ թափ առած էր: Այնքան հին, անգտանելի գիրքեր, մանաւանդ ձեռագրեր գտած եմ, որոնցմէ մէկը – կրնաք նաեւ չհաւատալ, այնքան անհաւատալի է այս իրողութիւնը – Դանիէլ Վարուժանի ձեռագիր քերթուածներն էին, որոնք տարի երեւան եւ մեծ ակնածանքով յանձնեցի Գրականութեան եւ Արուեստի Թանգարանին, ուր կը հանգչին մեր մեծ գրողներէն շատերուն ձեռագրերն ու արխիւները:

Տ. Գիտենք որ մեծ հաւաքածոյ մը ունիք գիրքերու, մանաւանդ մամուլի, մասնաւորաբար եգիպտահայ մամուլի: Ինչպէս կազմուած է այդ հաւաքածոն:

Ս. Պ. Մեր ընտանիքին մէջ մեծ էր սէրը մշակոյթին հանդէպ եւ յարգանքը՝ գիր ու գրականութեան: Երբ երիտասարդ դարձայ, սկսայ ոչ միայն ընթերցել, այլ նաեւ գուրգուրանքով պահել ունեցած եւ հաւաքած գիրքերս: Շրջապատիս մէջ բարեկամներ եւ ոչ բարեկամ մարդիկ երբ տեսան սէրս գիրքերուն հանդէպ, սկսան ինծի բերել իրենց ունեցածները, երբեմն նաեւ պատահաբար գտածները, յաճախ ըսելով՝ «Տոքթօր, դժն միայն ասոնց յարգը կրնաս գիտնալ»: Այսպէս է որ Յովհաննէս Տէր Պետրոսեանի եւ Աւետիս Եփուճեանի պէս մտաւորականներ իրենց գիրքերէն ինծի տուած են:

Կար նաեւ Պոգօ անունով մէկը (Ֆէլիքս Տեմիրճեան), որ երբ ձեռքը գիրք կամ

թերթ անցնէր, անպայման ինծի կը բերէր, փոխանակելով չնչին գումարի մը, որ պատառ մը հաց կ'ապահովէր իրեն:

Այսպիսով է որ ունեցած եմ այս հաւաքածոն, որուն մէջ տեղ գրաւած են Տ'Արգոսի թարգմանած եւ հրատարակած բոլոր գիրքերը, մեր մամուլի կարգ մը անուններուն առաջին համարները եւ այլն:

Պէտք է նշեմ նաեւ, որ յաճախ այդ գիրքերուն մէջէն թուղթեր եւ մասունքներ գտած եմ:

Ունիմ նաեւ մեծ հաւաքածոյ մը նամակներու, Սփիւռքի ամենէն նշանաւոր դէմքերէն ստացուած, ինչպէս եւ մետալներու եւ այլ յուշանուէրներու:

Տ. Մեր այս զրոյցը փակելու համար կ'ուզէք խօսք մը ըսել:

Ս. Պ. Այսօր դժբախտաբար փոխուած են ժամանակները, պայմանները, տարբեր եղած են մերօրեայ եւ մօտ անցեալի ապրելակերպը, մարդոց ճաշակն ու վերաբերմունքը, հետաքրքրութիւնները, փոխադարձ վերաբերումը:

Փոխուած է ազգային գիտակցութիւնը, պակսած են – տարբեր պատճառներով – հայրենասիրութեան ոգին եւ հայրենիքի հանդէպ պարտականութիւնները:

Ետ քայլի եւ նահանջի մէջ է հայ լեզուն, հայ գիրի եւ գրականութեան հանդէպ սէրը եւ ուշադրութիւնը:

Համայնքային մեր կեանքն ալ դժուարութիւններ կը դիմագրաւէ. կը պակսին վարչական եւ կազմակերպչական աշխատանքներ կատարելու գիտակցութիւնը, հետաքրքրութիւնը եւ պատրաստակամութիւնը:

Պէտք է դիմագրաւել գործակցութեան ոգիի պակասը, հոգ չէ թէ ակնկալուածէն նուազ չափով:

Իմ փափաքս է, որ մենք միասնական ոգիով գործակցինք, վերստեղծելու համար մեր գաղութին երբեմնի շուքը:

Չիք փրկութիւն, առանց միասնակաւնութեան եւ համագործակցութեան:

Տ. Խորապէս շնորհակալ ենք մեզի ժամանակ տրամադրելու այս զրոյցին համար: Առողջութիւն եւ խաղաղ օրեր կը մաղթենք ձեզի:

ԹԵՅԱՍԵՂԱՆ ԴԵՍՊԱՆԱՏԱՆ ՄԷՋ

«Թեյասեղանի հրաւիրուած ենք դեսպանատունը», երջանիկ ժպիտ մը կը ճազագայթէր դէմքէս:

«Ինչ դեսպանատուն», հարց տուաւ ամուսինս, որ նոր տուն վերադարձած էր գործէն:

«Հայկական դեսպանատունը, մոռցա՞ր որ Եգիպտոսի մէջ դեսպանատուն ունի մեր հայրենիքը», ըսի խանդավառ շեշտով:

«Իսկ ի՞նչ առիթով է այս հրաւերը», կասկած կար անոր ծայնին մէջ:

«Հայաստանը գոյութիւն ունենալէն ի վեր առաջին անգամ ըլլալով իր պատմութեան մէջ, Սեպտեմբեր 1992-ին դեսպանատուն ունեցած է Եգիպտոսի մէջ եւ մենք, բախտաւոր անձեր, հրաւիրուած ենք հոն թէյ խմելու», յարեցի աւելի եւս խանդավառուելով:

Որոշեալ օրը մեծ խնամքով պատրաստուեցանք ու ծրագրեցինք դեսպանատան հրաւերը ընդառաջելէ ետք, ճաշարան մը ընթրիքի երթալ: Հելիոպոլիսէն մինչեւ Ջամալէք չէի կրնար ուրախութիւնս զսպել, ահաւասիկ հասած էր այն օրը, երբ մեր հայրենիքը թշուառութեան ու դժբախտութեան Այվազովսկիի նկարած ալիքներէն աւելի անողորմները ճեղքելով, 20րդ դարու վերջին տասնամեակին կարողացած է իր անկախութիւնը պսակել դեսպանատուներ բանալով աշխարհի զանազան երկիրներուն մէջ ու մենք դեսպանին հիւրերն էինք այդ օրը:

Շքեղ մենատան վրայ ծածանող եռագոյնը հպարտութեամբ լեցուց մեր կուրծքերը եւ ինքնավստահ կերպով պահակին ցոյց տալէ ետք մեր ոսկետառ հրաւերը, մուտք գործեցինք դեսպանատան գեղեցիկ պարտէզէն ներս, ուր Արտակարգ ու Լիազօր դեսպան դոկտ. Եդուարդ Նալպանտեան արհեստավարժ ժպիտով ընդունեց մեզ ու հրաւիրեց ներս:

Դեսպանատան առաջին յարկին վրայ գտնուած հիւրանոցները արդէն իսկ լեցուած էին գաղութին երեւելի ու միջին տարիքէն վեր դէմքերով, որոնց հետ մեր ներկայութիւնը խոտոր կը համեմատէր: Հոն էին տէր եւ տիկին Անդրանիկ



Մեսրոպեանը, տէր եւ տիկին Նուպար Սիմոնեանը, տէր եւ տիկին Վարդ Ալեքսանեանը, տէր եւ տիկին Պերճ Թերզեանը, տէր եւ տիկին Խոսրով Զաքարեանը, տէր եւ տիկին Լեւոն Գաղթացեանը, տէր եւ տիկին Վարուժան Գազանճեանը, տէր եւ տիկին Հրաչ Սիմոնեանը, տէր եւ տիկին Երուանդ Թումայեանցը, տէր եւ տիկին Նորայր Տեովլէթեանը, տէր եւ տիկին Բարսեղ Գըրլեանը, տէր եւ տիկին Ճէքի Կէվրէկեանը, տիար Կարպիս Եազըճեանը եւ շատ մը ուրիշներ, որոնց անունները վրիպած են յիշողութիւնէս: Ինչ մեծ եղաւ մեր ուրախութիւնը, երբ գտանք մեզի միակ տարեկից Պր. Օննո Պըլլքտանեանը:

Թէպէտ սեղանը լի էր համեղ խմորեղէններով ու անուշեղէններով, սակայն ամուսինս եւ ես գոհացանք մէկական գաւաթ թէյով, չէ՞ որ շուտով ընթրիքի պիտի երթայինք:

Դոկտ. Նալպանտեան իր դիւանագիտական ճարտարութեամբ հեզասահ կերպով կ'անցնէր մէկ խումբէն միւսին ու իր սրամիտ խօսակցութեամբ կը գրաւէր բոլորին: Կ'ուզէինք գիտնալ հրաւերին դրդապատճառը, որը ծածուկ կը պահէր Դոկտ. Նալպանտեան: Երբ ամէն մարդ կերած-խմած էր, պարոն դեսպանը հրաւիրեց մեզ սենեակ մը, ուր երեք շարքի վրայ, թատերասրահի մը նման, աթոռներ շարուած էին:

Առեղծուածային կացութեան ժամանակ կը նախընտրեմ հեռուէն դիտել եղելութիւնը, ուստի մենք, երեք երիտասարդներս, գրաւեցինք վերջին շարքին աթոռ-



ները: Երբ ամեն մարդ տեղաւորուած էր, դեսպանատան Ա. քարտուղարը փակեց դուռը ու թելերը ծալած կուրծքին վրայ եւ սրունքները իրարմէ քիչ մը հեռու, հաստատուն կանգնեցաւ անոր առջեւ: Խնդիրը սկսած էր կասկածելի դառնալ...

Դոկտ. Նալպանտեան շնորհակալութիւն յայտնեց մեզի, որ ընդառաջած էինք իր հրաւերին, ապա անցաւ գործի: Ըսաւ որ բախտաւոր էինք ազատ անկախ հայրենիք ունենալու, երազ մը որ մի քանի տարի առաջ անկարելի կը թուէր: Եգիպտոս առաջին երկիրներէն էր, ուր անկախութենէն անմիջապէս ետք, Մարտ 1992-ին, Հայաստան բացած էր իր դեսպանատունը Տոքքի թաղին փոքրիկ յարկաբաժինի մը մէջ ու մի քանի տարի ետք, շնորհիւ Գահիրէի Հ.Բ.Ը.Մ.ի սեփականութիւնը դարձած այս հոյակապ մենատունը չնչին վարձքով տրամադրելու, Հայաստանի Հանրապետութիւնը կարողացած էր հոն փոխադրել դեսպանատունը Մայիս 1996-ին: Ապա ըսաւ որ նոր անկախացած, տկար տնտեսութեամբ հայրենիքը իր կրած իրերայաջորդ փորձանքներուն՝ ըլլան անոնք բնական կամ մարդկային, ինչպէս 8 Դեկտեմբեր 1988-ի Սպիտակի աւերիչ երկրաշարժը եւ 1991-ին Ատրպէյճանի դէմ պատերազմը, Հայաստան անկարող էր հոգալ դեսպանատան տարեկան ծախսերը, որոնք կը հասնէին 86,000 Ամերիկեան Տոլարի... Զգոյշ լռութիւն մը տիրեց սենեակին մէջ:

Դոկտ. Նալպանտեան կրցած էր ներկաներուն կատարեալ ուշադրութիւնը գրաւել ու շարունակեց, թէ եգիպտահայ գաղութը հարուստ եղած է հինէն ի վեր, ուր բարերարներ միշտ կտակներ թողած են համայնքին եւ այդ նուիրելու պատրաստակամութիւնը աւանդութեան նման տակաւին կը շարունակուի գոյութիւն ունենալ:

«Եւ սիրելի եգիպտահայեր, հիմա այս սենեակէն պիտի հաւաքենք պէտք եղած գումարը», ըսաւ ան յաղթական ու կարծէք մեղմացնելու համար իր խօսքին ազդեցութիւնը աւելցուց, «միայն 60,000ը

պիտի հաւաքենք քանի որ 28,000ը Աղեքսանդրիոյ գաղութը պիտի տրամադրէ», եզրակացուց Պր. Դեսպանը ամենայն ինքնավստահութեամբ:

Ճերմակ մեծ թուղթ մը բռնած, խմբավարի ստոյգ ու կտրուկ շարժումով մը ըսաւ՝ «Հիմա այս թուղթը պիտի անցնի ձեզմէ իւրաքանչիւրին, որուն վրայ ամէն ոք պիտի գրէ իր անունը եւ դիմացը այն գումարը, որ տրամադիր է վճարել եւ այսպէս, մինչեւ որ հասնի վերջին անձին...»: Երբ թուղթը դանդաղ պտոյտէ ետք հասաւ մեզի, արդէն լեցուն էր բազում 1,000 ամերիկեան տոլարներով: Ստիպուած, մենք ալ 1,000 գրեցինք մեր անունին դիմաց:

Թուղթը վերադարձուեցաւ Դոկտ. Նալպանտեանին, որ ականթարթի մը մէջ գումարեց նշուած թիւերը եւ յայտարարեց որ ուզուած 60,000էն 15,000 կը պակսէր ուստի թուղթը անգամ մը եւս շրջան մը պիտի ընէր...

Մի քանի անձեր, ստիպուած, իրենց տրամադրած գումարը վերատեսութեան ենթարկեցին մինչեւ որ 60,000ը գոյացաւ թուղթին վրայ: Պր. Դեսպանը, որ մեծ յաջողութեամբ գրաւոր յօժարութիւնը ստացած էր կալանաւոր եգիպտահայերէն, տեղւոյն վրայ ներկայ տիկիններէն յանձնախումբ մը կազմեց, որ մի քանի շաբթուան ընթացքին հաւաքէին նուիրատուութիւնները:

Առաքելութիւնը յաջողութեամբ պսակուելէ ետք, Ա. քարտուղարը իր բռնած դիրքէն մէկդի քաշուեցաւ ու դոկտ. Նալպանտեան սենեակին դուռը բացաւ: Ազատ արձակուածի հապճեպով հրաժեշտ տուինք դեսպանատան, սակայն ընթրիքի երթալու ախորժակ չունէինք այլեւս: Հազար ամերիկեան տոլար արժած 2 գաւաթ թէյ խմած էինք. եթէ գիտցած ըլլայինք մեր գլխուն գալիքը, գոնէ քանի մը պատառ անուշեղէն կերած կ'ըլլայինք:

*Սօսի Ներեպեան-Յակոբեան
31 Դեկտեմբեր 2023*

ՓՈՐ-ՍԱԽՏԻ ՎՐԱՆԱՔԱՂԱՔԸ Ճանիկ Չագրի Աչքերով Իր Նամակներուն Ընդմեջէն

Նամակ թիւ 51
Զակագիկ, 22 Նոյեմբեր 1918

Որքան կը փափաքէի, որ Եգիպտոս ըլլայիր հիմա, ինծի հետ, որպէս իմ կինս: Այս վերջերս այնքան զբաղած էի Օգնութեան գործով, որ քու աշխատակցութիւնդ շար յարգի պիտի ըլլար: Այս քաղաքին մէջ եմ երէկուրնէ ի վեր, որպէս պատուիրակ Եգիպտոսի Հայ Կարմիր Խաչին, որպէսզի հոս ալ մասնաճիւղ մը բանանք: Այսօրեղ մօտ յիսուն հայ ընտանիք կայ, որոնց գրեթէ բոլոր անդամները կ'աշխատին



Կամսարական եղբայրներու ծխախոտի գործարանին մէջ: Իմ առաքելութիւնս լիովին իրագործուած է: Կազմեցի այդ մասնաճիւղը, որ կապուած պիտի ըլլայ Գահիրէի հաստատութիւն: Նախագահուիին պիտի ըլլայ տիկին Կամսարականը. անգլիուի մը, 25 տարեկան եւ կինը ընտանիքին կրտսերագոյն որդւոյն: Իրենց ամուսնութիւնը վիպերգութիւն մըն է: Մինչ երիտասարդը ուսանող էր Անգլիա, կը հանդիպի այս աղջկան եւ կը սիրահարին: Այդ պահէն օրիորդը կը սկսի հայերէն սորվիլ: Հիմա ան հայերէն կը խօսի առանց օտար շեշտի եւ աւելի լաւ, քան ուսեալ հայ երիտասարդ մը: Երկուքն ալ գրեթէ նոյն տարիքը ունին եւ զիրար շատ կը սիրեն:

Ես Կամսարական ընտանիքին հանդիպեցայ երկու տարի առաջ, Լուքսորի մէջ. հիացայ այդ ընտանիքով եւ սիրեցի զիրենք: Կը զգամ թէ անոնք ալ սիրով կապուած են ինծի: Ես հիմա անոնց հետ կը մնամ եւ այս տողերը կը գրեմ Զակագիկի իրենց բնակարանէն: Վերջին երեկոս այնքան հաճելի դարձուցին, կարծես ըլլայի հարազատ տանս մէջ:

Երէկ, նախ քան Գահիրէէն մեկնիլս, Ներսէսը հեռաձայնեց ըսելով, թէ նամակ ստացեր է քեզմէ եւ հարց կու տայ թէ ես ալ նամակ ստացե՞ր եմ: Անշուշտ որ ստացեր էի, եւ ինչ նամակ: Ուրախութեամբ համակուած էի տեղեկանալով որ ամբողջ ընտանիքը լաւ է եւ ապահով: Ասիկա մեր միակ փափաքն էր, որ հիմա իրականացեր է: Կը մնայ գտնել ամենէն արագ միջոցը իրարու միանալու: Վստահ եմ որ դուն կրնաս կարգադրել այդ, եթէ ճամբորդութիւնը արտօնուի եւ մայրս կարենայ ձմեռ չեկած դուրս գալ: Այն ատեն կրնանք ամուսնանալ, կարելիին չափ շուտ:

Պէտք է գրելէ դադրիմ: Կը համբուրեմ քեզ: Տրեսութիւն:

Համակ սիրով՝

Ճանիկ

Նամակ թիւ 43 (25)
Երկուշաբթի, 29 Ապրիլ 1918
(Հատուած)

Անցեալ Երեքշաբթի ձգեցի Գահիրէն եւ ժամը 6.15-ի շոգեկառքով մեկնեցայ Փոր-Սաիտ: Ըստ սովորականին շոգեկառքը լեցուն էր զինուորականներով, որոնք կը վերադառնային իրենց կեդրոնատեղերը: Ես «D» կառքին միակ քաղաքացին էի:



Երեկոյին ընթրիքը կը սպասարկուէր երեք անգամով՝ ժամը 6.30-7.30, երկրորդը՝ 8.30-ին, իսկ երրորդը՝ 9.30-ին: Ես ընտրեցի ժամը 7.30-ինը: Ճաշը շաւր համեղ էր, անշուշտ չէր կրնար տարբեր ըլլալ. Եգիպտոսի մեր ընկերութիւնը շաւր բժախնդիր է: Գալով ննջարան-կառքերուն, որոնք Վերին Եգիպտոս կ'երթեւեկէն, զբօսաշրջութեան շրջանին կ'ապահովէն աւելի քան տասը հազար ոսկի հասոյթ մը: Այժմ այդ գումարը իջած է մէկ հազարի: Սակայն հակառակ անոր, մենք միշտ լաւ աշխատանք կը տանինք մեր ցամաքամասին սպասարկութեան մէջ: Ընթրիքի ընթացքին դիմացս նստած էր բարձրաստիճան սպայ մը: Ժամանակ մը վերջ, երբ համոզուեցաւ թէ ես պիտի չխօսիմ, ինք սկսաւ խօսակցիլ հետս, սկսելով օրուան եղանակէն: Ապա ըսաւ թէ ինք պոլսեցի է եւ Մեզոփոթամիայէն կու գայ: Բերա կը բնակի, արեւելեան լեզուներ կը խօսի եւ անունը Քոնլիֆ Րոք է: Նոյնիսկ ժամ մը խօսելէ ետք չկրցաւ կռահել ազգութիւնս: Շաւր ջանաց, սակայն ի զուր: Անգլիացիի բնաւ չէր նմաներ, այլ աւելի արեւելքցիի մը:

Շոգեկառքը Փոր-Սաիտ հասաւ երեկոյեան ժամը 11.30-ին: Այնտեղ «Eastern Exchange» պանդոկին մէջ ինծի սենեակ մը ապահովուած էր: Ուղղակի անկողին մտայ, սակայն ամբողջ գիշերը չկրցայ քնանալ: Առաւօտեան ժամը 6-ին ոտքի էի, լուացուելու, ածիլուելու, թէյ խմելու արարողութիւնները կատարելէ ետք շաւր ճշդապահ եղայ առաւօտեան ժամը 9-ին պր. Հորնպլուրիի հետ ունեցած ժամադրութեանս: Ան պատասխանատու դեկավարն է Փոր-Սաիտի հայ գաղթականներու վրանաքաղաքին: Պաշտօնական հարցեր քննարկելէ ետք ճամբայ ելանք եւ 20 վայրկեանի մէջ Սուէզի ջրանցքը անցնելով, հասանք վրանաքաղաք:

Առաջին անձը որ փափաքեցանք տեսնել «S.M.O.» էր, որուն հետ քննարկեցինք քանի մը առկախ հարցեր: Ան երիտասարդ բժիշկ մըն է, մօտ 26 տարեկան, շաւր ազնիւ, շաւր լաւ դաստիարակուած անձ մը: Շաւր լաւ հասկցանք իրարու տեսակէտները եւ բոլոր որոշումները առինք կատարեալ համաձայնութեամբ: Յետոյ ան զիս պարտցուց վրանաքաղաքին բոլոր անկիւնները, զիս ներկայացուց Հայ Կարմիր Խաչի անձնակազմին, որ ստանձնած է տեղւոյն բժշկական բոլոր ծառայութիւնները: Մենք այնտեղ ունինք հայ բժիշկ մը, երեք հիւանդապահուիչներ, ինչպէս նաեւ տասը այր եւ կին սպասարկողներ, որոնք գիշեր-ցերեկ կը հոգան վրանաքաղաքի բոլոր կահիքները: Ասոնք ընտրուած են տեղւոյն գաղթականներուն մէջէն:

Խնամակալուի օր. Ճաքսընի հետ նախ այցելեցինք փոքրերուն բաժինը: Այնտեղ կային խնամքի տակ տասը փոքրիկներ, տժգոյն, տկար, որոնց մեծամասնութիւնը աչքի տկարութենէ կը տառապէր: Այս բաժինը օր. Ազնիւ Սէֆերեանի խնամքին տակ էր: Այնքան բարի եւ հոգատար էր ան, որ բոլոր փոքրիկները կը պաշտէին զինք: Ան Եգիպտոս ծնած է եւ հոն ստացած է իր ուսումը պատերազմի ժամանակ, եւ ուրիշ տասը տիկիններու հետ քննութիւն անցուցեր է 1915-ին, Կարմիր Խաչի խումբին միանալու համար: Այդ տասը տիկիններէն մին էլիզ Լէքէճեանն է. յետագային ան աշխատած է Ժընեւի հիւանդանոցներէն մէկուն մէջ:

Յաջորդ բաժինը որ այցելեցինք, կանանց բաժինն էր: Անոնք շաւր քիչ էին եւ ոչ մէկ լուրջ բանէ կը տառապէին: Մնացեալ բոլոր բաժինները գրեթէ պարապ էին, սակայն շաւր լաւ վիճակի մէջ:

Ամենազուարճալի բաժինը հայ բժիշկներուն դարմանատունն էր, ուր հաւաքուած էին ամէն տարիքի այրեր, կիներ եւ մանուկներ, որոնք բժշկական օգնութիւն կը խնդրէին երեւակայական հիւանդութիւններու համար: Այնպէս կ'ենթադրեմ, որ այս եղածը





կ'օգնէ խեղճ գաղթականներուն բարեմփութեան, որոնք դժբախտաբար հայ ցեղին ամենապղծէր նմոյշներն են:

Հայ բժիշկ Վարդան Սահակեանը մօտ երեսուն տարեկան է. ծնած է Կեսարիա եւ ուսումը ստացած Կոստանդնուպոլսոյ պետական համալսարանէն: Երբ կը ծառայէր թրքական բանակին մէջ որպէս բժիշկ սպայի աստիճանով, գերի կը բռնուի անգլիացիներուն կողմէ, Երուսաղէմի անկումէն անմիջապէս առաջ: Մենք ազատ արձակել տուինք զինք եւ դրկեցինք այժմու պաշտօնին: Բրիտանական զինուորական իշխանութիւնները շատ փափկանկատ են եւ միշտ պատրաստ են օգնելու պատերազմի այն գերիներուն, որոնք օտար ցեղէ են եւ պարտադրաբար, առանց իրենց կամքին կը ծառայեն թրքական բանակին մէջ:

Հայկական բաժնի մեր աշխատակիցներուն կողքին կան նաեւ երկու օգնական բժիշկներ, մին Սուրիայէն, իսկ միւսը՝ փիւրզի, Լիբանանէն: Կայ նաեւ սուրիացի հիւանդապահուի մը եւ այլ չորս կամ հինգ սպասաւորներ, որոնք պատսպարեալներէն ընտրուած են: Մենք Կարմիր Խաչը մեծ մասով կը հոգայ աշխատաւորներուն վարձքերը եւ կը հայթայթէ անոնց ուրելիքը: Պատսպարանին բժշկական եւ առողջապահական ծառայութիւնները հրամանաբար Քամբէլի հսկողութեան տակ են: Ամէն օր բժիշկ մը կ'այցելէ պատսպարեալներուն, կը քննէ իւրաքանչիւրը, ստուգելու համար թէ լաւ վիճակի մէջ են:

Ժամը 11-ին ժամադրութիւն ունէի պարոն Հորնպլատուրի հետ, այցելելու վրանաքաղաքին այլ բաժինները: Բժշկական բաժնէն մեկնելէս առաջ, պէտք չէ մոռնամ յիշատակելու հիւանդապահուիներուն գլխաւորին անունը՝ Աննա Սիրաքեան, իզմիրցի աղջիկ մը, որ լքած է իր ծննդավայրը եւ մեկնած Եգիպտոս, շարունակելու համար իր ուսումը եւ ստանալու համար իր ընտրած ասպարէզին բարձրագոյն վկայականը: Անմիջապէս որ հայ գաղթականները Եգիպտոս հասան, ան կամաւոր կ'արձանագրուի Կարմիր Խաչին եւ սքանչելի աշխատանք կը տանի: Չեմ կրնար չհիշանալ այս տեսակ կանանցով, որ մեր ազգը պատիւ ունի ունենալու:

Ժամը 11-ին նախ այցելեցինք ապաքինուածները, տկարները եւ տարեցներուն ճաշարանը, ուր իւրաքանչիւրին յատուկ ճաշ կը տրուի, բժշկական խորհուրդին համաձայն:

Այս բաժինը հսկողութեան տակն է ամերիկացի տիկնոջ մը, որ մաս կը կազմէ ամերիկեան Կարմիր Խաչին: Անոնք մէկ երրորդով կը մասնակցին ծախսերուն, մնացեալը Հայ Կարմիր Խաչը կը հոգայ եւ տեղւոյն կազմակերպութիւնը: Չեմ կրնար երեւակայել, թէ այս խեղճ հայերը իրենց հայրենիքին մէջ ունեցած ըլլան այսքան խնամք, ուշադրութիւն եւ աւելի լաւ ուրեստ: Մեր խորին շնորհակալութիւնները կը յայտնենք այն բոլոր օտար բարեգործական կազմակերպութիւններուն, որոնք այնքան անձնուիրաբար կ'աշխատին եւ իրենց անհատական եւ ազգային գանձարանէն կամովին կը հոգան ընկճուած եւ տառապեալ ազգերը, անոնց օգուտին եւ բարեւաւումին համար:

Այս բոլորը ուղղակի հսկողութեան եւ կարգաւորման տակ է տեղւոյն հրամանաբար պարոն Հակի, տարեց անգլիացի մը, որ շատ լաւ թրքերէն կը խօսի, երկար ժամանակ Թուրքիա ապրած ըլլալուն: Զիս լաւ տպաւորեց որպէս տարեց բարի անձ մը: Վստահաբար ան արժանի է գնահատանքի, իր տարած կազմակերպչական գործին համար: Ան կը վճարուի Կազմակերպչական Մարմինին կողմէ, որ հսկողութեան տակ է Եգիպտոսի ներքին գործոց նախարարութեան:

Արդէն կէսօր եղած էր: Հայ բժիշկը եւ երկու հիւանդապահուիները խնդրեցին որ իրենց հետ ճաշեմ: Բայց պարոն Հորնպլատուրի հիւրն էի: Թոյլտւութիւն խնդրեցի



իրմէ, որ մեկնիմ: Անշուշտ շատ գոհ մնացի հրաւիրուած ըլլալու համար, որովհետեւ աւելի տեղեկութիւններ պիտի կարենայի ունենալ իրենց աշխատանքին մասին: Երրորդ հիւանդապահուիին, պաշտօնի վրայ ըլլալով, չկրցաւ միանալ մեզի: Որպէս ճաշ սպասարկեցին ծուածեղ, փիլաւ, գետնախնձոր եւ քաշուած միս (քօֆթէ): Մինչ կը ճաշէինք, մեր շուրջ խումբ մը փոքրիկներ կ'աղմկէին, կարծես ուշադրութիւն գրաւելու համար, որ իրենց ալ բաժին հանենք: Սակայն հիւանդապահուիները ըսին, թէ անոնք եկած են մեզ տեսնելու, թերեւս ծաղիկ մը առնելու, սակայն ոչ ուրեղիք: Փոքրիկները այնպիսի բարբառ մը կը խօսէին, որ կարելի չէր բան հասկնալ իրենց ըսածէն:

Ճաշէն ետք քանի մը հաշիւներ ունէինք նայելիք բժիշկին եւ օրիորդ Աննային հետ, քանի որ նախորդ յանձնաժողովը քանի մը վճարումներ առկախ ձգած էր: Ժամը 2-ին ժամադրութիւն ունէի պր. Հորնպլաուրի հետ, վարժարանները այցելելու համար: Սակայն նախ այցելեցինք աշխատանոց մը, ուր մոյկեր, կօշիկներ եւ տրեխներ կը շինէին, տեղւոյն վրայ եւ դուրսը ծախելու համար: Շատ բժախնդիր աշխատանք կը տանին: Ատաղծագործերն ալ շատ զբաղ էին կահոյք շինելով եւ նորոգելով: Դերձակներուն գործը այնքան յաջող չէ, որովհետեւ շատ պահանջ չկայ:

Դպրոցի դասարանները սքանչելի էին: Այնպէս կան 6-16 տարեկան երկու սեռէ 1200 աշակերտներ, մանկապարտէզը ներառեալ: Մէկ-մէկ այցելեցինք բոլոր դասարանները: Դասաւանդուած զանազան նիւթերն էին պատմութիւն, աշխարհագրութիւն, թուաբանութիւն, բնագիտութիւն, անգլերէն, հայերէն եւ մարմնամարզ: Մոռցայ ըսելու կրօնի դասաւանդումը քահանայի մը կողմէ: Տպաւորութիւնս այն է, թէ հոյակապ ծրագիր մը կազմած են այդքան կարճ ժամանակի մէջ, ամենակարող տնօրէնի մը հսկողութեան տակ, որուն անունը դժբախտաբար այժմ կը վրիպի ինձմէ:

Հայ արիւնքը անգլիական բանակէն քսանապետի մը խնամքին տակ են: Ան յօժարակամ աշխատանք կը տանի եւ կը մարզէ տղաքը:

Երբ տեսայ այդ մանր տղաքը, որոնք կը թրթռան ռազմական ոգիով, իրենց հրամանատարին հրամաններուն տակ թեքելով իրենց մատուցած մարմինները, զօրացնելով իրենց նուրբ մկանները, կարծրացնելով իրենց բարակ թելերը, նմանելու համար այն զինուորներուն, որոնք կը պայքարին իրենց ուղղուած նետերուն եւ ռումբերուն դէմ: Այս բոլորէն յետոյ դժուար է զսպել արցունքներս, որոնք կաթիլ-կաթիլ կը հոսէին այրող այտերու վրայ: Այդ համեստ տեսարանը խումբ մը փոքրիկ հայ տղոց, հնամաշ, գոյն-գոյն զգեստներով, որոնց դէմքերը երեք տարի առաջ միայն ահ ու սարսափ կ'արտայայտէին երբ կը փախչէին, արեան ծարաւ թուրքերու սպանդէն... Ո՛հ տեսքը փոքր տղոց շարքերուն, որոնց մէջ իւրաքանչիւր մանուկ զօրեղ էր եւ անընկճելի գոյութիւնը պահպանելու եւ ապրելու վեհ կամքով, հակառակ թշնամիին ցեղը բնաջնջելու տարած ջանքերուն: Խոհեք ու պատկերներ կը խուժէին միտքս աւելի արագ, քան կրնայի զանոնք երեւակայել, աչքերուս առջեւ փռելու համար ահաւոր նահապտակութիւնը ցեղիս: Սակայն յուսահատական զգացումներու ժամանակը չէր: Ժամանակն էր, որ մարմնիս իւրաքանչիւր հիւլէն հպարտութեամբ թրթռայ, ի տես հայ արիւնքը կրող սիրելի մանուկներուն, որոնք լրիւ արթուն են իրենց ներքին ծայնի հրահանգին, որ կը հրաւիրէ զիրենք օգնելու իրենց քոյրերուն եւ եղբայրներուն, որոնք կը կեղեքուէին բարբարոսներուն լուծին տակ ու դէպի մահ կ'երթային: Այդ ափ մը փոքրիկները իմ աչքերուս, խորհրդանիշ էին վերածնունդի, օտարին առաջնորդութեամբ, Անգլիոյ կամ Ֆրանսայի օգնութեամբ, ծառայելու համար ազատութեան եւ քաղաքակրթութեան վեհ նպատակին: Ո՛չ, հայերը պիտի չմեռնին, երբ ցեղը իր ծոցին մէջ այսպիսի մանուկներ խնամէ: Այնքան սքանչացած էի անոնց վարքով, գիտութեամբ եւ կրթութեամբ, որ խնդրեցի պր. Հորնպլաուրէն, որ թոյլ տայ ինծի զանոնք Գահիրէ տանիլ, առաջին առիթին, Կարմիր Խաչի ընդունելութեան մը, օգ-



նութեան ֆոնտին համար: Ուրախ եղայ, երբ իր հաւանութիւնը տուաւ:

Մեր յաջորդ այցելութիւնը տեղւոյն հացագործներուն փոռներուն էր. անոնք կը հայթայթէին ամբողջ վրանաքաղաքին հացը: Կայ նաեւ հսկայ կազմակերպութիւն մը, որ քէյք կը հայթայթէ Պաղեստինի բանակի զինուորներուն. մօտաւորապէս քառասուն հազար քէյք (40.000) կը ղրկուի օրական: Այն գաղթականները, որոնք այս փոռներուն մէջ կ'աշխատին, կը վճարուին: Անոնք երկու սեռէ են, առաւելապէս կիներ: Խոհանոցները սքանչելիօրէն կարգաւորուած են եւ այնպէղ պատրաստուած ճաշերը շատ համեղ են: Խնդրեցին որ համարեսեմ: Այնքան համեղ էին, որ պիտի ուզէի զանոնք ճաշի համար ունենալ: Կար արեւելեան ձեւով պատրաստուած ոսպ, նաեւ մածունով եղինձ, ապաքինուածներուն համար: Հացը կը պատրաստեն ինչպէս սովոր են պատրաստել իրենց երկրին մէջ, տեսակ մը «փիպէ», որ իրենց ազգային հացն է եւ շատ կ'ուտուի Թուրքիոյ մէջ:

Այն բաժինները, ուր կիները ձեռագործ կ'աշխատին, շատ հետաքրքրական են: Բաժին մը կայ «լասէ» ձեռագործներու, որոնք այնքան գեղեցիկ էին, որ քանի մը հար գնեցի քեզի համար, որպէսզի գաղափար մը ունենաս անոնց կարարած ձեռագործներուն մասին: Ասոնք վաճառատան մէջ մնացած վերջին կտորներն էին: Այս վրանաքաղաքին մէջ իրագործուած ձեռագործներուն մասին սքանչելի բաներ գրուած են: Այսպէղ բաժին մը կայ նաեւ, ուր կը շինուին բուրդէ շատ գեղեցիկ գորգեր: Հար մը գնեցի, անկողնին առջեւ դնելու համար: Կայ նաեւ շատ կարելոր բաժին մը, ուր կը կարուին զօրքերուն խաքի (գոյն) շապիկները: Վարիչը կինն է հայ բողոքական պատուելիին, երկուքն ալ գաղթականներ: Ինծի ըսաւ թէ պահանջը այնքան մեծ է, որ դժուարութեամբ կը հասցնեն: Ցանցերու պատրաստութիւնն ալ կարելոր բաժին մըն է: Ասոնք այն ցանցերն են, որոնք կը պաշտպանեն վրաններն ու խրճիթները թռչող միջատներէն: Գիտես թէ աշխարհի այս կողմը անոնք աւելի վար են, քան այլ աղէտներ: Այսպէղ կայ նաեւ մարդոց զանգուած մը, որ ընդունակ չլլալով զինուորական ծառայութեան, կը զբաղի փայտէ ոտնամաններ, դգալներ, սանրեր եւ այլ իրեր շինելով եւ փոքր շահ մը կ'ապահովէ:

Աւելի քան գոհ ըլլալով այցելութենէս, եւ նկարի առնելով որ տակաւին պէտք էր պարէնի մեծ վաճառատունը երթայի գնումներու համար, հրաժեշտ առի Կարմիր Խաչի անձնակազմէն եւ հեռացայ պր. Հորնալաուրիի հետ, ջրանցքի հրամանատար Քորոմպի անձնական նաւով:

Օրական մեծ թիւով զինեալներ կ'այցելեն այդ վայրը եւ հայերուն կողմէ շինուած շատ յուշանուէրներ կը գնեն իրենց ընտանիքներուն ղրկելու համար:

Այս նամակս կը ձօնեմ «Հայկական Օր»ուան, ինչպէս «Մեր Օր»ը Անգլիոյ մէջ: Չեմ կրնար բաւականաչափ նկարագրել այցելութենէս ստացած տպաւորութիւններս եւ ոգեւորութիւնս ... աշխատանք, կարգապահութիւն, առողջապահութիւն եւ ամէն ինչ:

Օր մը վերադառնալ եւ համբուրել մեր հայրերուն սիրելի սուրբ հողը. հոգ չէ թէ տակաւին շուրջով կարելի պիտի չըլլայ արիւնով կարարել մեր ազգակիցներուն սրտին մօտ այդ ցանկութիւնը:

Յաջորդ նամակիս մէջ աւելի պիտի խօսիմ անձիս մասին: Կը յուսամ քեզմէ ստանալ ուրիշ նամակներ: Մի' մտաւորաբար, ժամանակ պիտի գտնեմ նաեւ խօսելու իմ աշխատանքիս մասին:

Բարի գիշեր սիրելիս:

Թարգմանեց՝ Անայիս Ծիգմէճեան



ՆՈՐԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ճաբոնի մեջ կրթական համակարգը կ'ենթարկուի հիմնական փոփոխության մը, որուն նպատակն է պատրաստել ոչ թե ճաբոնցի, այլ աշխարհաքաղաքացի սերունդ:

Այս նոր համակարգը «Խիզախ փոփոխություն» (Futoji no henko) կը կոչուի եւ հիմնուած է Erasmus, Grundtvig, Monnet, Ashoka եւ Comenius կրթական ծրագիրներուն վրայ:

Այս համակարգով դաստիարակուող աշակերտները կ'իմանան եւ կ'ընդունին այլ մշակոյթներ եւս եւ անոնց մտահորիզոնը ազգային փոխարէն կը դառնայ միջազգային:

12 տարուան ծրագիրը տնային աշխատանքով չի յոգնեցներ աշակերտը, որ միայն հինգ նիւթեր կ'ունենայ սորվելիք.

1- Corporative թուաբանութիւն. հիմնական գործառութիւններու եւ տնտեսական հաշիւներու համար.

2- Ընթերցանութիւն. աշակերտը կ'ընտրէ իր նախասիրած գիրքը եւ ամէն օր կը կարդայ, պայմանով որ շաբթուան մը մէջ աւարտէ գիրքին ընթերցումը.

3- Քաղաքացիութիւն. այլ խօսքով՝ օրէնքներու իմացում, բարոյագիտութիւն, կանոններու հանդէպ յարգանք, հանդուրժողականութիւն եւ բնապաշտպանութիւն.

4- Համակարգչային գիտութիւն. գրասենեակ, համացանց, ընկերային ցանցեր եւ ասոնց ճիշդ օգտագործումը.

5- Լեզուներ. 4 կամ 5 այբուբեններ - լեզուներ՝ ճաբոներէն, լատիներէն,



անգլերէն, գերմաներէն, չինարէն, արաբերէն - մշակոյթներ, կրօններ: Ամրան ընթացքին ընտանեկան փոխ-այցելութիւններ տարբեր երկիրներու քաղաքներուն:

Ինչ կրնայ ըլլալ արդիւնքը այս համակարգին.

1- Երիտասարդներ, որոնք 18 տարեկանին կը խօսին չորս լեզու, գիտեն չորս այբուբեն եւ ծանօթ են չորս տարբեր մշակոյթներու:

2- Իրենց համակարգիչներն ու բջիջայինները որպէս աշխատանքային գործիքներ կ'օգտագործեն:

3- Տարեկան 52 գիրք կը կարդան:

4- Յարգանք ունին օրէնքին, բնութեան եւ համակեցութեան հանդէպ:

5- Սքանչելի կերպով կը վարեն տնտեսական հաստատութիւններ:

Բայց աշխարհը կը կորսնցնէ ինքնուրոյն ժողովուրդ մը, իր դարաւոր աւանդութիւններով, հրաշալի մշակոյթ ունեցող երկիր մը եւ աշխարհին օրինակ դառնալու չափ յարգալից քաղաքացիներ:

Վահրամ Ատոմ Թաթիկեան իր լուսանկարին տակ հետեւեալը գրեր է.

«Հարիր չորս փարեկան Հերիք Յարութիւնեանի հետ եմ, եւ մեր կռնակին իր հիւսած գորգն է՝ Խաչեն գիւղի արծուագորգը, զոր Հերիքը աշխատեր է մօրը հետ, Արցախի Պարեցիք գիւղին մէջ 1916 թուականին, երբ 16 փարեկան էր, որպէս իր հարսանեկան օժիտին մաս կազմող փոխագորգ»:



ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ

ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ

Եգիպտոսի նախագահ տիար Ապտել Ֆաթթահ Ալ Սիսին պաշտոնական հանդիպում մը ունեցեր է Հայաստանի Հանրապետութեան նախագահ Վահագն Խաչատրեանի հետ, Տուպայի մէջ, ուր տեղի կ'ունենայ ՄԱԿի կազմակերպութեամբ Կլիմայական փոփոխութիւններու վերաբերեալ բարձրամակարդակ համագումար մը:



Եգիպտոսի պաշտոնական խօսնակ Ահմետ Ֆահմին յայտարարեր է, որ երկու նախագահները ընդգծեր են հայկական-եգիպտական յարաբերութիւններու պատմական նշանակութիւնը եւ համաձայնութիւն կայացուցեր, այդ յարաբերութիւնը յառաջ մղելու եւ զօրացնելու համար:

ՍԱՐԳՍԵԱՆ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐ

Վահրամ Սարգսեան շահած է սենեկային երաժշտութեան 2023-ի մրցանակը, իր «Խաղաղ Երգեր» խորագրուած յորինումին համար:

Սարգսեան Մոնրէալ ապրող գանատահայ յորինող-խմբավար մըն է, որուն յորինումները յաճախ կատարուած են եւրոպական բեմերու վրայ:

Մրցանակը, որ հիմնուած է 1978 թուականին եւ յատուկ է Գանատայի երգահաններուն, կը կոչուի Գանատայի նախկին վսեմաշուք կառավարիչին՝ Ժիլ Լէժէի (Jules Léger) անունով:



ԷԼԲԱԿԵԱՆ ԿՐԿԻՆ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐ

Երրորդ անգամ ըլլալով ամերիկահայ խօսնակ եւ ծրագիրներու հեղինակ Անոյշ Էլբակեան կը շահի Էմմի մրցանակը, որ ամերիկեան հեռատեսիլի ամենէն բարձր մրցանակն է:


Էլբակեան «Boston Globe»-ի աշխատակից է: Նախապէս՝ 2016 թուականին առաջին անգամ ստացեր է Էմմի մրցանակը իր արխիւային «A Day in the Life of Leo» աշխատանքին համար:



ԱՆՈՒԱՆԱՓՈԽՈՒԹԻՒՆ

Միայն 2016-ին է, որ Գերմանիան ընդունած է հայերու Ցեղասպանութիւնը, որմէ ետք ինչպէ՛ս կարելի էր, որ Պերլինի մօտակայքը գտնուող եւ Պրանտընպըրկ նահանգի մայրաքաղաքը հանդիսացող Փոցտամ քաղաքին մէկ կամուրջը կը շարունակէր կրել Երիտթուրքերն ու Ցեղասպանութիւնը գլխաւորած Էնվէր Փաշայի անունը:

2021-ին Փոցտամ քաղաքին բնակիչներէն մէկը այս հարցումը տուած է խորհրդարանին: Անկէ ետք ծաւալած զրոյցները յանգեր են կամուրջին անուանափոխութեան:





ՄՐՑԱՆԱԿ

Ուրախութեամբ վերահասու դարձանք, որ արմատներով լիբանանահայ մեր հայրենակից տոքթ. Վարդգէս Արզումանեան օրերս տիրացած է միջազգային մակարդակի մրցանակի մը:

Կը նշուի, որ տոքթ. Արզումանեան, որուն անունը եղած է հարիւրաւոր մասնակիցներու մէջ, տիրացած է «Ամենաբարձր մակարդակի կրթութեամբ ունեցող բժիշկ»ի պատուաւոր մրցանակին:




ՇՆՈՐՀԱԼԻ 850

2023-ը մահուան 850-ամեակն էր Ս. Ներսէս Շնորհալի Վարդապետին, որ վախճանէր է 1173 թուականին: Ան ծնած է 1102-ին, թէեւ ստոյգ չէ այս թուականը:

Այս առիթով կ'արժէ յիշել, որ մահուան 100-ամեակին, Վատիկան հրատարակած է երեք դրոշմաթուղթեր, 25, 90 եւ 180 լիր արժողութեամբ:

Շնորհալին մեզի ժառանգ ձգած է գրական հարստութիւն մը, արձակ եւ չափածոյ գործերով: Իր արձակէն նշանաւոր է մանաւանդ «Թուղթ Ընդհանրական»ը, գրուած 1166-ին եւ հրատարակուած 1788 թուականին:


Գրիգոր Նարեկացիէն ետք ինքն է որ զարգացուցած է մեր չափածոն, թէ՛ բովանդակութեան, թէ՛ ձեւի առումներով:



«ՏՈՒՏՈՒԿԻ ՄԵՂԵԴԻՆ»

2022 թուականին եգիպտացի գրագիտուհի Մանալ Իսան, որ անգլիական քաղաքակրթութեան եւ թատրերգութեան դասախօսուհի է Գահիրէի Այն Շէմս համալսարանէն ներս, հրատարակէր է գիրք մը «Տուտուկի Մեղեդին» խորագրով, որ կ'անդրադառնայ Եգիպտոսի հայ համայնքին, 19-րդ դարէն անոր Եգիպտոսի մէջ գոյութեան, ձգած եւ կրած ազդեցութիւններուն: Ըստ դոկտոր Իսայի, Եգիպտոսը այլընտրանքային հայրենիք եղած է հայերուն համար:

Գիրքին անգլերէն թարգմանութիւնը կը նախատեսուի 2024 թուականին, եւ պիտի ներկայացուի Եգիպտոսի գիրքի ցուցահանդէսի ծիրէն ներս:




ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

Ֆրանսայի Հայկական Թանգարանին եւ Նուրիան Ֆրէնկեան հիմնադրամի միացեալ ջանքերով, Պրիքսէլի Պօղոսեան հիմնադրամի սրահին մէջ տեղի ունեցած է ցուցահանդէս մը, ուր հանրութեան ներկայացուած են գեղեցիկ գործեր Ֆրանսայի Հայկական Թանգարանէն:

Մանրանկարներ, ձեռագրեր եւ պատարագի թանկարժէք իրեր տեղադրուած են ժամանակակից արուեստագէտներու՝ Սարգիսի, Մխիթար Կարապետեանի, Անթուան Ակունճեանի, Ժան Պօղոսեանի, Այտա Ղազարեանի եւ Փասքալ Կոնվերտի գործերու կողքին: Ցուցահանդէսը, որուն հոգատարներն են Պերնար Կուլի եւ Լումա Սալամէ, ունի նաեւ համագումարներու ծրագիր մը, նուիրուած Հայաստանի հնագոյն եւ ժամանակակից պատմութեան:

Arménie. Le temps du sacré

10 NOVEMBRE 2023 - 10 MARS 2024



ՄԻՇԷԼ ՄՈՎՍԷՍԵԱՆ

Միջազգային երկրաչափ Միշել Մովսեսեան ծնած է 1959 թուականին, Փարիզ, բայց 18 տարեկանին տեղափոխուած է ԱՄՆ:

«Ես ծնած եմ Ֆրանսա, ուսանած Ամերիկա, կ'ապրիմ Անգլիա, բայց հոգիով հայ եմ» կ'ըսէ Մովսեսեան:

Ճարտարապետական իր գործերէն են Պրիւքսէլի ՆԱԹՕի գրասենեակը, ExxonMobil-ը Շանկահայի մէջ, Տուպայի Palm Jumeirah-ն եւ այլ կառոյցներ Ֆրանսայի, Անգլիոյ, Սպանիոյ, Մարոկոյի, Արաբական Ծոցի եւ այլ երկիրներու մէջ:

Այս կառոյցներու ամբողջացումէն ետք է, որ Մովսեսեանի անունը դարձաւ միջազգային, որպէս ճարտարապետ եւ յարդարող (designer), եւ իր աշխատանքները սկսան երեւիլ ճարտարապետական կարելոր ամսագրերու մէջ:

Մովսեսեանի յաջորդ աշխատանքը, որ տակաւին աւարտի չէ հասած, Սէուտական Արաբիոյ Իսլամական Ժառանգութեան թանգարանի նոր շէնքն է:




ԼԻՄ ՔԵՆՏԻՐՃԵԱՆ

Բնիկ Անճարցի (Լիբանան) պատանի Լիմ Քէնտիրճեան, որ միայն 13 տարեկան է, հրատարակած է իր առաջին գիրքը, անգլերէն լեզուով, որ կը կրէ Journey to Royal Destiny խորագիրը:

Քէնտիրճեանի այս վէպը գիտա-երեւակայական է եւ կը պատմէ հերոսուհիին՝ Այվիի արկածախնդրութիւնները:

Գիրքը լոյս տեսած է Young Author Academy հրատարակչատան կողմէ, ԱՄՆ:

Քէնտիրճեանի այս գիրքը կը յուշէ, որ եթէ ան շարունակէ այս ուղին, գրականութեան մէջ պիտի կարենայ դնել իր դրոշմը:



ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ ԱՐՑԱԽԻ ՄԱՍԻՆ


2023-ի Դեկտեմբեր 14-էն մինչեւ 2024-ի Յունուար 15, Փարիզի նշանաւոր Պաստիյի հրապարակին վրայ, Փարիզի քաղաքապետարանի եւ «L'Œuvre d'Orient» կաթողիկէ կազմակերպութեան համատեղ ջանքերով կազմակերպուեր է «Լեռնային Ղարաբաղ՝ վտանգուած հայկական ժառանգութիւն» խորագիրը կրող բացօթեայ ցուցահանդէս մը, ուր ցուցադրուած են Լեռնային Ղարաբաղի հայկական պատմամշակութային ժառանգութիւնը ներկայացնող 30 բացառիկ լուսանկարներ:

Ցուցահանդէսի պաշտօնական բացումին Ֆրանսայի Հայաստանի դեսպան տիկին Յասմիկ Տոլմաճեան շնորհակալութիւն յայտնել է Փարիզի քաղաքապետարանին եւ «L'Œuvre d'Orient» կազմակերպութեան, մշտապէս Հայաստանի եւ հայ ժողովրդի կողքին կենալու համար եւ նշել է, որ ցուցահանդէսի կազմակերպումը այդ կեցուածքին արդիւնքն է:

Տիկին դեսպանը շեշտել է, որ Արցախի ժողովուրդին հանդէպ ցեղասպանութիւն գործելէ ետք, Ատրպէյճան ձեռնարկել է հայկական բոլոր հետքերը վերացնելու աշխատանքին, եւ ըսել, որ նման ցուցահանդէսներ կը սատարեն Լեռնային Ղարաբաղի տարածքին հայկականութիւնը հաստատելու եւ տարածելու, եկեղեցիներուն եւ յուշարձաններուն լուսանկարներուն ցուցադրութեամբ:

Ցուցահանդէսի բացման ներկայ եղած են եւ





Art of the World պատկերասրահը, որ կը գտնուի Րիվեր Օքս փողոցին վրայ (Հիուսթըն, ԱՄՆ), հպարտութեամբ կը ներկայացնէ եգիպտահայ հանրաճանաչ քանդակագործ Արմէն Ակոբի (Կրպոյեան) վերջին ցուցահանդէսը, որ խորագրուած է «Մանտրաներ Արմէն Ակոբի»:

Ուրբաթ 19 եւ Շաբաթ 20 Յունուար 2024-ին, Անթիլիասի Մայրավանքին մէջ տեղի ունեցած է «Հայկական Աշխարհը եւ Տարածաշրջանային Վերջին Իրադարձութիւնները» թեմայով խորհրդաժողով մը: Այս առիթով, Արամ Ա. Վեհափառ Հայրապետին հրաւերով Անթիլիաս ժամանած են Հայաստանէն, Արցախէն, Միացեալ Նահանգներէն, հարաւային Ամերիկայէն, Ֆրանսայէն եւ Զուիցերիայէն պատմագէտներ, իրաւագէտներ եւ քաղաքագէտներ:

[illegible]

2023-Ի ՎԵՐՁԻՆ ՄՐՑԱՇԱՐՔԸ

17, 18 եւ 19 Նոյեմբեր 2023-ին Սրբուհի Թերեզա ակումբը կազմակերպեց իր տարեկան պասքէթ-պոլի մրցաշարքը, հովանաւորութեամբ Աղեքսանդրիոյ եւ Երուսաղէմի Կաթողիկէ Հայոց վիճակաւոր առաջնորդ Գերշ. Տ. Գրիգոր Օգոստինոս Ս. Եպս. Գուսանի եւ Եգիպտոսի Հայոց Թեմի բարեխնամ առաջնորդ Գերշ. Տ. Աշոտ Ս. Եպս. Մնացականեանի: Մրցաշարքին նախագահն էր Տիար Էսամ Սաֆուաթ Բաղէպ, որ նուիրած էր բաժակը ի յիշատակ իր ողբ. կողակիցին՝ Մօնիք Ասաատ Բաղէպի:

Ուրբաթ, 17 Նոյեմբերի առաջին խաղը տեղական կրտսեր խումբերու միջեւ էր, որ չէր հետաքրքրեր մարզասէր հասարակութիւնը, իսկ երկրորդը՝ Աղեքսանդրիոյ Հ.Մ.Ը.Մ. ՆՈՒՊԱՐԻ եւ Հ.Մ.Ը.Մ. Կամքի միջեւ: Հակառակ որ նախորդ մրցաշարքին, որ տեղի ունեցած էր Հ.Մ.Ը.Մ. Արարատի դաշտին վրայ, Աղեքսանդրիոյ Հ.Մ.Ը.Մ. ՆՈՒՊԱՐԻ լաւ խաղարկութեամբ մը կարողացած էր Սրբուհի Թերեզայի խումբը պարտութեան մատնել, այս անգամ սակայն անկարող եղաւ յաղթական հանդիսանալ. մրցումը աւարտեցաւ ի նպաստ Հ.Մ.Ը.Մ. Կամքին:

Շաբաթ, 18 Նոյեմբերի առաջին խաղը նախորդ օրուան յաղթական Կամքին եւ Սրբուհի Թերեզայի խումբերուն միջեւ



էր: Հակառակ որ սկիզբը Կամքի տղաքը առաւելութիւն արձանագրած էին, սակայն պահեստի լաւ մարզիկներու չգոյութեան պատճառով, անոնք չկարողացան տուրքալ Սրբուհի Թերեզայի պատանիներուն դիմաց: Մրցումը աւարտեցաւ 66-49, ի նպաստ հիւրընկալ ակումբին:

Օրուան երկրորդ խաղը ամենամեծ ժողովրդականութիւն վայելող մրցումն էր՝ Հ.Մ.Ը.Մ. ՆՈՒՊԱՐԻ եւ Հ.Մ.Ը.Մ. Արարատի խումբերուն միջեւ: Նախորդ մրցաշարքին իրենց կրած պարտութիւնը ասուպի մը վերածել ու 2023-ի մրցումները յաղթանակով փակելու կը ձգտէին Հ.Մ.Ը.Մ. ՆՈՒՊԱՐԻ տղաքը, իսկ Հ.Մ.Ը.Մ. Արարատի տղաքը իրենց տարած յաղթանակը չէին ուզեր որ պարզապէս անոյշ յիշատակի մը վերածուի, այլ կը տենչային նոր յաղթանակով մը ամրապնդել զայն: Մրցումը սկսաւ սաստիկ տաք ու խառնաշփոթ. ջիղերու պրկումը այնքան զօրաւոր էր, որ մի քանի վայրկեան ոչ մէկ պասքէթ արձանագրուած էր: Սխալ անցումներն ու ճախող արձակումները իրար կը յաջորդէին: Անգամ մը Հ.Մ.Ը.Մ. ՆՈՒՊԱՐԻ տղաքը բարելաւելով իրենց խաղը արդիւնքի առաւելութիւն կ'ապահովէին, մի քանի վայրկեան հանգիստ շունչ մը քաշելու առիթը տալով իրենց համակիրներուն, ապա Արարատի





տղաքը սթափելով, թիւի տարբերութիւնը կը նուազեցնէին, նոյնիսկ առաւելութիւն ձեռք կը ձգէին: Եւ այսպէս, մինչեւ որ խաղին աւարտէն մի քանի վայրկեան առաջ, Հ.Մ.Ը.Մ. ՆՈՒՊԱՐԻ տղաքը իրենց իսկական մակարդակը ցուցաբերեցին եւ մրցումը աւարտեցին ի նպաստ իրենց, 62-49 արդիւնքով:

Կիրակի, 19 Նոյեմբերի յայտագրին վրայ կար վերերաններու մրցում մը, եգիպտահայ հինգ ակումբներէն կազմուած խառն երկու խումբերուն միջեւ, որ փնտռուած խաղ մըն է մարզասէր հասարակութեան կողմէ:

Մրցաշարքին աւարտականը Հ.Մ.Ը.Մ. ՆՈՒՊԱՐԻ եւ Սրբուհի Թերեզայի խումբերուն միջեւ էր, ուր Հ.Մ.Ը.Մ. ՆՈՒՊԱՐԻ տղաքը իրենց գերազանց խաղար-

կութեամբ անկարողութեան մատնեցին Սրբուհի Թերեզայի տղոց ու մրցումը աւարտեցին ի նպաստ իրենց, 80-50 արդիւնքով: Խմբապետ Հրազդան Գալընեան ստացաւ մրցաշարքին բաժակը:

Վարձքը կատար խումբին պատասխանատու Ռուբէն Սիմոնեանի եւ օգնական Վարդան Աւետիսեանի, այս յաղթանակին համար:

Երեք օրերու ընթացքին, ժրաջան վարչական ու Սրբուհի Թերեզայի մղիչ ոյժ տիար Գրիգոր Միքայէլեան, բարձրախօսը ձեռքին, հաճելի ու անմիջական կերպով վարեց մրցաշարքը:

Այսպէսով աւարտեցաւ 2023-ի հինգ մրցաշարքերուն վերջինը. կը հանդիպինք Յուլիս 2024-ին:



ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ



Ուրախութեամբ կը տեղեկացնենք, թէ հայ մեծ երգիծանկարիչ Ալեքսանտր Սարուխանի գրիչին պատկանող 5 գիրքեր այսուհետ հասանելի են Fundamental Scientific Library of the National Academy of Sciences - Հայաստանի Գիտություններու Ազգային Ակադեմիայի Համահայկական թուանշային (digital) գրադարանին մէջ:

Հարկէնշել որ Ալ. Սարուխանի սոյն գիրքերը թուայնացնելու գնահատելի նախաձեռնութիւնը կը պատկանի յարգարժան Տիար Հայկ Գաւալճեանին: Ան մեծանուն երգիծանկարիչի ստեղծագործութեանց պահպանման եւ տարածման պատասխանատուութիւնը ստանձնած՝ Սարուխանի թոռնուհի Տիկին Սիլվա Ներետեան-Բլատեանի թոյլտւութեամբ սոյն թուայնացած տարբերակները տրամադրեց Հայաստանի Գիտություններու Ազգային Ակադեմիայի Հիմնարար գրադարանի (Fundamental Scientific Library of the National Academy of Sciences) գիտական խորհրդատու՝ դոկտ. Տիգրան Զարգարեանին, որուն ջանքերով գիրքերը (Open Access) կարգավիճակով հասանելի են Սարուխանի գործերով բոլոր հետաքրքրուողներուն:

Scientific Library of the National Academy of Sciences - Հայաստանի Ազգային Գիտություններու Ակադեմիայի Հիմնարար գրադարանի յղումը.
<https://www.flib.sci.am/>

Սարուխանի գործերուն յղումները՝ ստորեւ.

- Ալեքսանդր Սարուխան, 1898-1977. Երգիծանկարիչ
<https://arar.sci.am/dlibra/publication/390530/edition/361246>

- Մենք մեր ակնոցով
<https://arar.sci.am/dlibra/publication/390537/edition/361253>

- Մեծապատիւ մուրացկաններ
<https://arar.sci.am/dlibra/publication/390535/edition/361251>

- Յուշեր
<https://arar.sci.am/dlibra/publication/390532/edition/361248>

- Ընկեր Բ. Փանջունի ի Ծապլվար եւ Վասպուրական
<https://arar.sci.am/dlibra/publication/390533/edition/361249>

